



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material







ԴՍՏԵՐԳ

ԱՌԱՔԻՆԻՔ

Ի Ն. ՊԷԱԴՈՒՍԷ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՏԻՄՈԹԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆԷՍԵԱՆ



ՄԱՐՍԻԼԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՔՄԵԱՆ

1863

1880

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS

PHYSICS



PHYSICS

PHYSICS

1880

ԴՍՏԵՐԲ

ԱՌԱՔԻՆԻՔ

8 + 171

---

ՄԱՐՍԻԼԻՒ . — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Marseille. — Typographie Arménienne, rue Paradis, 68.


---



45

Դ Ս Տ Ե Ր Ք

# ԱՌԱՔԻՆԻՔ



Ի Ն. ՊԷԱԴՈՒՍԷ



ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՏԻՄՈԹԷՈՍ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԱՆԷՍԵԱՆ

9388-57



ՄԱՐՍԻԼԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1863

91235-CK2

## Ն Ա Խ Ե Ր Գ Ա Կ

Յայտնի է թէ օրինակը խօսքէն աւելի կազթէ, յայն սակս այս քանի մը փոքրիկ պատմութեանց թարգմանութեանը ձեռնամուխ եղայ համբակ գրչաւս, ուր որ իբրեւ ի հայելոց կը տեսնուի աստուածապաշտ կենաց երջանկութիւնը, եւ ամբարիտ մարդկան թռուտագոյն ելքը: Յիրաւի շատ անգամ աստուածապաշտ ու բարեպաշտ մարդոց գլխէն զանազան փորձանքներ ու նեղութիւններ պակաս չեն ըլլար. բայց “գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի փորձանաց. եւ զանիրաւս պահել ի սանջանս յաւուրն դասասանի”: Բ Պէտ. Բ. 9:

Դու մի զարմանար որ երբեմն ամ-

բարի՜ւոս մարդիկ կը ծաղկին, կը բարգաւանին, ու ազգի ազգի կենցաղոյս բարեբաղդութեամբ կը լնանին. դու անոնց վախճանին միտ դիր, թէ՛ ո՛ր պիտի երթայ հասնի. անոնց վերջը եղկութիւն ու թռուտութիւն է: Երանելին Դաւիթ անգամ որ այնչափ մեծահաւաս էր ու բարեպա՜ւոս, որուն ջերմեռանդ մեծահաւասութեանը ու բարեպա՜ւոսութեանը Խորայելացոց թագաւորներէն ոչ մէկը կրցաւ հաւասարիլ, ամբարի՜ւոսներուն ծաղկիլն ու բարգաւանիլը տեսնալով՝ քիչ մնաց որ իւր անյողդողդ հաւասքին սասանութիւն կը բերէր. “բայց զի իմ փոքր մի եւս սասանեալ էին ոտք, սակաւիկ մի եւս գայթակղեալ էին գնացք իմ. նախանձեցայ եւ ընդ անօրէնս, զխաղաղութիւն մեղաւորաց որպէս տեսանէի,

գի ոչ գոյր վրէպ մահու ցոցա". որոնք  
սարածամ մահուամբ չէին զրկէր ի-  
րենց ցանկալի բաներէն: Սակայն ի  
վերջոյ ի միտ առնելով թէ անուշ  
արդարացի հասուցում մը կայ, վեր-  
ջապէս ամբարիճները պիտի դատուին  
ու դատապարտուին Ասուծոյ արդար  
դատասանար, կըսէ. “ասացի ի  
գուր ուրեմն արդարացուցի զսիրտ  
իմ”: Սաղմ. ՀԲ. 12: “ի մտի եղի՝ թէ  
սակայն եւ այս ջան է առաջի իմ,  
մինչեւ մտից ի սրբութիւնն Ասուծոյ,  
եւ ի միտ առից զկատարած ցոցա":  
Սաղմ. ՀԲ. 14:

Մի կարհասես ըլլար, համբերէ ու  
պիտի տեսնաս թէ՛ արդարոյն ու ամ-  
բարճին մէջ տեղը ինչ խտիր ու սար-  
բերութիւն կայ:

Ամբարիճները թէեւ աս աշխար-

հիս մէջ իրենց անօրէնութեանց տոյժը  
չկրեն, ի հանդերձելումն բիւրապատիկ  
առաւելութեամբ կրելնուն սարակոյս  
չկայ: Երբոր Նաբուգոդոնոսոր թա-  
գաւորը մեռաւ ու գնաց ի դժոխս,  
աշխարհիս սկիզբէն այն տեղը եղող  
մեծամեծ թագաւորները ու իշխաննե-  
րը զարմանալով ելան կանգնեցան,  
բարեւ բռնեցին ու ըսին, «Եւ դու իբ-  
րեւ զմեզ ըմբռնեցար»: *Ես. ԺԴ. 9:*  
Իմաստութեամբ կը գրէ Մաեսոց աս-  
տուած իմաստ վարդապետն մեր այս-  
պէս. «Որպէս զարեւ եւ զանձրեւ եւ  
զամենայն բարութիւնս արդարք եւ  
մեղաւորք ի միասին վայելեցին, այս-  
պէս եւ զբաժակ պատուհասին ի միա-  
սին ըմպեն, իսկ իւրաքանչիւրոց պա-  
տիւ եւ պատուհաս առ հանդերձեալն  
պահի»:


Աղէկ նեան չէ որ մարդ մը ինչուան վերջը յաջողութեան ու երջանկութեան մէջ կրլլայ: Ասուծոյ մեծագոյն պատուհասը ամբարիւծը անխորաս թողուլն է: Ասուած սիրած ծառային երբեմն երբեմն նեղութիւն ու փորձութիւն կը խրկէ, անոնց հաւաստիք ու բարեպաշտութիւնը փորձելու համար: Բոլոր արդարները նեղութեանց մէջ փորձուելով ընտիր գտան. ինչպէս Սողոմոն կը հրաշարանէ. «սակաւիկ ինչ խրատեալք եւ սրտմեալք, գտցեն զմեծ բարութիւն: Զի Ասուած փորձեաց զնոսա, եւ եզիս զնոսա իւր արժանիս: Իբրեւ զոսկի ի բովս ֆննեաց զնոսա», . : *Իմաստ.* 9. 5: Ասուած երբեմն ամբարիւծ մեղաւորաց խնդիրքը եւս կը կատարէ, անոնց արտին ցանկութիւնը կը իւրեցու-

նէ եւ կողորմի եւս . բայց ի՞նչ ողորմութիւն . կողորմի անոնց յարդարացասում բարկութեան իւրում : Ասուած անապատին մէջ Խարայէլացւոց սրենջանաց ձայնը լսեց , անոնց բաղձանքը լեցուց , անքիւ բազմութեամբ լորամարգիներ խրկեց . բայց մինչդեռ անոնց միսը ակռաներնուն մէջնէր , Ասուծոյ բարկութիւնը եկաւ հասաւ վրանին : Այսպէս Ասուած երբեմն մեղաւորներուն յաջողութիւն կուտայ , զանոնք ի բարձ եւ ի գահ կը բարձրացունէ , մեծամեծ իշխանութեանց տէր կըրնէ՝ կամ ժողովրդոց մեղացը բարկանալով , կամ թէ անոնք անտի գահավէժ անկանելով որպէս զի ի սպառ խորհակին . . . :

Այս ըսածներուն կենդանի օրինակները քիչ շատ հետեւեալ պատմու-



թեանց մէջ կը տեսնուին : Եւ մեր այս  
դուզնաձեայ երկասիրութեան նպա-  
տակը ոչ այլ ինչ է, բայց եթէ ընթեր-  
ցանելեաց հոգեւան գբօսանք մը մա-  
տուցանել. վասն զի պատմութիւնները  
գբօսցնելով միանգամայն կը ներսպա-  
ւորեն մարդուս հոգւոյն մէջ աստուած-  
պաշտութեան ու բարեպաշտութեան  
սէրն ու գաղափարը՝ որոնք մինակ  
մարդս կրնան երջանիկ ընել ի կրկնա-  
կի կեանս. եւ մեր սրտին փափաքն այս  
է, եւ ի սոյն նուիրեալ են կեանք մեր :





# ԴՍՏԵՐՔ ԱՌԱՔԻՆԻՔ



Գ Լ Ո Ի Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն



## ԲՕՁԱՄՈՆՏ

Ասպետութեան ասեն Դալէնեան Քօնրադէն կը բնակէր Զանկանպուրկի ամրոցին մէջ՝ որ Գերմանիոյ հարաւային կողմը կիյնայ: Արհեստը ու բնութիւնը անառիկ քրած էր զանի: Քօնրադէն պատուաւոր, բարեպաշտ ու մարդասէր ասպետ մըն էր: Երբէք հարստահարեալ անձ մը վայրապար անոր օգնութիւնը խնդրած չէր, եւ միշտ պատրաստ էր պատժելու պատժապարտը. Իւր բոլոր հպատակները հօր պէս կը սիրէին զինքը. բայց դրացի ասպետները՝ որոնք յափշտակութեամբ կապրէին միշտ, մահու չափ կա-

սէին գինքր, եւ երդուած էին վրէժխնդիր ըլլալ անկէ :

Իւր Ռօզալի անուն կինը առաքինասէր կեանք մը կը վարէր. եւ սարսապայման եռանդուն սիրով կը սիրէր իւր Ալպերդ ու Ռօզամոնս անուն երկու զաւակները՝ որոնք իրեն գեղեցիկ յոյսեր կը խոստանային :

Ի մեծ ցաւ իւր՝ մահը իւր Ալպերս մանչ տղան քառամեայ հասակին մէջ յափճակեց իւր ձեռքէն, եւ մնաց իրեն մինակ Ռօզամոնս աղջիկ զաւակը՝ որ դեռ ան ասէն երկու տարեկան էր: Թէ որ այս սիրուն դրսերիկն ալ մեռնելու ըլլար, կոմսին նոյն ինչքը Հարդէնեան Հանսին կիցնար, որ կասէր ըզՔօնրադէնը, եւ պատեն առթի կապասէր անոր վիճ հասցնելու :

Իրիկուն մը մինչդեռ Քօնրադէն իւր աղջիկը գիրկն առած կը պատմէր անոր Ս. երկրին պատմութիւնները, Մարթէն՝ որ ասպետին առաջին զինակիրն էր, մտաւ սրահը, եւ լուր տուաւ Հարդէնեան Հանսին գալը՝ որ կուգէր ամբողջ մտնել :

Ասպէս, ըսաւ Մարթէն, կերելի թէ խօսելիք մը, կամ կարելոր գաղտնիք մը ունի հաղորդելու ձեզ:

Տեսնանք, ըսաւ Քօնրադէն, գնա իջեցուր շարժական կամուրջը, եւ ընդունէ զինքը արժանավայել յարգանօք, բայց թող մի տար իր հետք ներս մտնալ՝ բաց ի իւր երկու զինակրէն, միւս զինեալ մարդիկը ետ խրկէ:

Շուտ մը ամբողջ մտաւ Հարդէնեան Հանսը: Ողջունեցին զիրար փաղափարութեամբ: Ասպէս, ըսաւ Հարդէնեան Հանսը, կուզեմ քեզի հետ քանի մը վայրկեան առանձին տեսութիւն ընել, կարելոր բաներ ունիմ քեզի խօսելու:

Պօտէ, ըսաւ ասպէսը, իմ ընտանեացս համար գաղտնի բան մը չկայ:

Սակայն շատ կուզէի որ գործը՝ որուն վրայ պիտի խօսիմ քեզի, մեր մէջը ծածուկ մնար. բայց որովհետեւ այսպէս քեզի հանելի է, ահա քեզի կը ծանուցանեմ իմ այցելութեանս նպատակը: Վերահասա մեծ վտանգ մը կայ

առջիդ, քու հին քնամիդ՝ Ջօլէնեան Ֆրանսը որուն ձեռքէն որ երբեմն իւր աւարը յափրճակեցիր, բազմաթիւ գօրաց գլուխ անցած կուգայ կը մօտենայ ամրոցիդ: Կէս գիշերուն վրադ պիտի արձակի: Ես եկայ քեզի օգնելու: Ժողովէ զինեալ մարդիկդ, եւ քաղէ քնամեացդ դէմ: Այս անակնկալ յարձակումդ անոնց մեծ շփոթութիւն պիտի ձգէ: Ես կը պահպանեմ ամրոցը. հետս քաջ պատերազմական գօրաց խումբ մը բերած եմ: Կինդ ու աղջիկդ ապահովութեան մէջ պիտի ըլլան:

Այս լուրը ահաբեկ ըրաւ Քօնրադէնը, եւ Ռօզալի սոսկալով կը դողար: Ասպէս իւր ազգականին վրայ վստահութիւն չունենալը յայտնեց: Բայց նա գիտցաւ գօրաւոր խօսքերով ֆողարկել իւր նենգութիւնը. ես կուգամ, ըսաւ, իմ ամենալաւ հաւատարմութեան օգնութիւնս քեզի մատուցանելու. հաւատաւ իմ խօսքերուս, որոնք որ աննենգ արեւ կը բրդիսին:

Քօնրադէնին մարդիկը ժողովուեցան, եւ

Հարդէնեանին ընկերները մտան ամրոցին մէջ: Բօզալի իւր պսակակիցը սպառազինելու համար օգնած ասէնը զգացած ցաւոյն պէս երբէք ցաւ մը չէր զգացած: Անորո՞ւ նախզգացուքիւն մը զինքը վեր ի վայր կը վրդովէր: Ասպէսը տեսնալով անոր այլայլութիւնը ոչինչ տեղը ջանաց զանի հանդարտեցրնել. տեսաւ որ իւր ջանքերն աւելի եւս անոր տրտմութիւնը կը բորբոքէին:

Կէս գիշերէն քանի մը վայրկեան առաջ՝ Քօնրադէն զնաց քժնամուտն դէմ, որ հակառակ ասպետական օրինաց իւր վրայ կարձակէր: Շարժական կամուրջը վերցուեցաւ. եւ Հարդէնեան Հանսը իւր մարդիկը ամրոցին ամէն մասերուն մէջ բաժնեց.

Քօնրադէն աւելի ապահովութեան համար բողոքեր էր իւր հաւատարիմ Մարթէնը որ հսկէ Բօզալիին ու իւր աղջկանը ապահովութեանը վրայ: Ասպետին պսակակիցը չը բողոք զինքը մոլորիլ Հարդէնեանին հրապուրիչ շողմարար խօսքերէն. նախամեծար կրնտէր Մարթէնին խօսութիւնը՝ որուն

958852

որ քաղաքիսն ու հաւատարմութիւնը կը  
հանչնար . ուստի աւելի կը վստահէր անոր,  
քան թէ ասպետին :

Երկու ժամէն վերջը լսուեցան զինուց շա-  
ռաչիւնը ու պատերազմողաց աղաղակները :  
Երբայով աղաղակը կը մօտենար ամրոցին :  
Զինակիր մը լուր բերաւ Հարդէնեանին թէ՛  
Էրլանվալի շիսակութեամբք մեծ հրդեհ մը  
կը տեսնուի : Ասպետը սոսկացած ձեւացուց  
եւ յայտնեց Բօզալիին թէ իւր յասուկ ապա-  
հովութեանը համար պէտք է որ աշտարակին  
մէջ առանձնանայ :

Բօզալի դէմ կեցաւ . բայց Հարդէնեան  
խստութիւն կը բանեցունենմ , ըսաւ , աշտարակին  
մէջ մտնալու ստիպելու համար , եթէ  
դէմ կենալու որ ըլլաս . վասնզի, քու կեանքդ  
ինծի վստահացուած է քու պատկառելիքդ :  
Վստահը կըստառնայ , եւ ինքի կը մնայ մի-  
նակ երբայ աշտարակին մէջ պատսպարիլ ,  
ուր որ ամէն նախաշինքներէ ազատ պիտի  
ըլլաս . արդ մի դէմ կենար , եւ մանաւանդ  
մի ստիպեր զիս խստութեան միջոցներ ձեռք



առնելու : Բօզալիին դիմադրութիւնը անօգուտ եղաւ , նոյնպէս եւ Մարթէնին ցուցմունքները . ստիպուեցաւ Բօզալի իւր Բօզամոնս աղջկանը հետ մէկ տեղ երթալ նստիլ աշարակին մէջ : Առպէտը ընկերացաւ իրեն եւ ետեւէն դուռը գոցեց : Բօզալի որոշ կերպով լսեց անոր իւր ընկերներուն ըսելը քէ՛ հիմայ թռչունները վանդակին մէջ են , ինչ որ ուզենի կրնանք ընել :

Բօզալի այս խօսքերը լսելով իր ինչ սուկայի վիճակին մէջ զսնուելուն խելամուտ եղաւ . գիտցաւ որ իւր նենգածէտ ազգականը մասնութիւն մը պիտի պատրաստէ : Գրեկեց Բօզամոնսը դողդղալով եւ իմացաւ այս չարագուշակ խաղարկութեան նպատակը :

Առպէտը աշարակը թողելուն պէս իսկոյն հրաման տուաւ Մարթէնին որ ամրոցին մէջը հանող գաղտնի նամբան ցոյց տայ իրեն , որպէս զի պաշտպանէ զանի , եւ թե՛նամեաց կողմէն ամէն արձակումներուն դէմն առնէ :

Մարթէն աներկիւղ պատասխան տուաւ իրեն քէ՛ շատ լաւ կը համարիմ գէշագէշ պա-

սառիլ, քան թէ անհնազանդ զսնուիլ իմ  
սէրոջս՝ որ պատուէր տուած է ինձ երբէք մէ-  
կու մը ցոյց չսալ ամբողջին գաղտնի նամբան:

Այս անվեհեր պատասխանին սասանեցուց  
ասպետը. հրաման տուաւ շուտ մը որ անխո-  
հեմ զինակիրը բռնեն ու ստորեկրեայ բանսի  
մը մէջ նետեն: Ան ասէն Մարթէն քաւեց  
սուրբ եւ ահագին բարկութեամբ սպառնա-  
ցաւ իրեն առաջ մօտեցողին:

Սպանեցէք սա յանդուգը, պօռաց Հար-  
դէնեանը: Եւ շատ մը ասպետներ Մարթէնին  
վրայ թափեցան, եւ նա առիւծի նման ինք-  
զինք պաշտպանելով արձակողներէն չորսը  
գետնը փռեց:

Հարդէնեանը չափէ դուրս բարկանալով  
կանչեց միւս զինեալ մարդիկները, եւ հրա-  
ման քաւ անոնց Մարդէնին վրայ արձակիլ:  
Հնազանդեցան պատերազմականները, եւ ան-  
ոնցմէ երկուքն ալ քաջ զինակիրին հարուա-  
ծին սակ ինկան: Բայց տեսնալով որ պիտի  
ընկնի անոնց բազմութենէն, եւ արդէն ազ-  
դու վերք մը առած ըլլալով ձախ կողմի

թելին վրայ, փառուեցաւ ամրոցին սրահներէն մէկուն մէջ եւ դուռը գոցեց ու ամրացուց հաստատուն նիզերով՝ միտքը դնելով մինչեւ վերջը ինքզինքը պաշտպանել:

Ուրբ զինեալ մարդիկ, զորս թողուցեր էր Քօնրադէն՝ ամրոցին մէջ, Մարթէնին դիպած անօրէն գործէն զրգուելով ուզեցին զանի պաշտպանել: Կէսը Հարդէնեանին մարդոցը հարուածին սակ կորսուեցան, եւ միւսները ստրեկրեայ բանտրու մէջ նետուեցան:

Ամրոցին գաղտնի նամբան հանող դուռը կոտորեցաւ, եւ Հարդէնեանին անձնանուէր մարդոցմէն բազմութիւն մը պաշտանաւոր նշանով հոն լեցուեցան:

Ան ասէն շարժական կամուրջը վերցուեցաւ, եւ Հարդէնեանը հրաման քաւ որ ասպետին վերադարձին զինքը բռնեն ու աշտարակին մէջ նետեն: Մարթէն այս սոսկալի խօսքերը լսելով բարկութեամբ ակռաները կը կնռցունէր:

Առաւօտուն վիրաւորեալ զինակիր մը փու-

թոյ պնդութեամբ եկաւ լուր տալու թէ Քօն-  
րադէն չկարանալով բազմութեան դէմ դը-  
նել եւ կը դառնայ կուգայ ամբողջ: Իրօք  
Քօնրադէն երեւցաւ, եւ Հարդէնեանին գի-  
նեալ մարդիկը իսկոյն անոր չորս դին պա-  
սեցին:

Մասնութիւն, հնձ, պօռաց Քօնրադէն  
սուրբ փառելով: Մարդէն բացաւ անասեն ամ-  
բողջին դուռը ուր որ փառուեր էր, եւ թեմա-  
միները նեղֆելով եկաւ իւր սէրոջը հետ մի-  
ացաւ եւ իմացուց իրեն մասնուած ըլլալը:

Բռնեցէք երկուքը մէկսեղ, պօռաց Հար-  
դէնեանը: Զինեալ մարդիկը միահող առ-  
ձակեցան երկու փաջ պատերազմականնե-  
րուն վրայ եւ շատ անգամ յետ մղեցան.  
բայց վերջապէս բազմութիւնը յաղթեց ա-  
նոնց: Քօնրադէնին զէնքերը առին վրայէն եւ  
Մարթէն զանի պաշտպանել ուզելով սպա-  
նուեցաւ:

Այս հաւատարիմ գինակրին մահը ցաւօք  
լեցուց ասպետին սիրտը: Հարդէնեան Հան-  
սը տարաւ զինքը աշտարակին մէջ փակեց:

Այս դիպուկածէն քիչ մը ժամանակ ետք  
հասաւ Զօլէնեան Ֆրանսը ի Զանկանպուրկ  
եւ մասնեց զանի յաիւժսակուրթեան : Նոյն  
օրը լուր տրուեցաւ Քօնրադէնին հպատակ-  
ներուն թէ ազատած են իրենց հին տէրոջը  
հնազանդելէն, որուն յանցանքները զինքը  
փակեցին բանտի մէջ եւ այսուհետեւ կը  
պարտաւորին հնազանդիլ Հարդէնեան Հանս  
ասպետին :

Քօնրադէնին հպատակները այս լուրն առ-  
նելով շատ տրտմեցան, վասն զի կը սիրէին  
ասպետը եւ կը հանչնային իրենց նոր տէրոջը  
անողոքելի խստատնտեսութիւնը . բայց չէին  
կրնար դէմ կենալ : Ամբողջ պահակեր էր  
բազմաթիւ զօրաց խումբ մը , ուստի չէին  
կրնար զանի պաշարելու մտաբերել :

Ոմանք միտքերնին դրին իրենց տէրոջը օգ-  
նութեան կանչելու , անոր անձնանուէր բա-  
րեկամ եղող մէկ քանի ասպետները . բայց  
հարկադրեցան այս խորհուրդը ետ թողելու .  
վասն զի ան ասէն Գերմանիա զանազան  
գաղտնի կուսակցութիւններու բաժնուած

լինելով՝ ապսամբութեան խորհուրդներ ի վեր կերեալին. եւ այս ասպետները հարկադրած էին բազմաթիւ թշնամիներու դէմ դնելու :

Հարդէնեան Հանսը իր անիրաւ ձեռնարկութեան յաջող ելփին վրայ գոն լինելով՝ իւր բարեկամներուն մեծապատաստ հացկերոյթ մը տուաւ : Քօնրադէնին ինչքերը Զօլէնեանին տուաւ, եւ ստիպեց զանի որ զինքը Զանկապուրկի ժառանգութեան մէջ թողու :

Այս դիպուածներէն ուրբ օր ետքը Հարդէնեան Հանսը խոհեմութիւն դասեց, Քօնրադէնը ու իւր ընտանիքը Զանկապուրկէն հեռացունելը. եւ քանի տուաւ զանոնք կիսաւէր հեռաւոր ամրոցի մը մէջ, ուր ինք զիրենք զատ զատ ստրերկրեայ բաններու մէջ : Բօզալի մեծ դժուարութիւնով կրցաւ ձեռք բերել Բօզամոնն աղջկանն իւր քովը մնալը :

Ասպետը միտքը դրաւ որ Զանկապուրկն իրեն ամարային ամրոց ընէ, եւ ձմեռը իւր հին ամրոցը բնակի :

Իր նոր հպատակները շուտով զգացին ա-

նոր բնաւորութեանը դաժանութիւնը : Կասկածանօք ու մասնութեան երկիւղով բմբռնեալ, զի որոնց վրայ որ կասկածի կերթար կը սանջէր, ինքնապետական իշխանութիւն մը վարելով կը բանտարկէր, ձեծել կուտար, ու կը գլխասէր հպատակները, եւ ամէն տեղ անունը նողկալի եղած էր :

Զինքը առաւելապէս սանջողն այն էր որ չըլլայ թէ օր մը Քօնրադէնին Բօզամնոս աղջիկը Զանկանապուրէի ժառանգորդ ըլլալուն իրաւունքը գայ ցոյց տայ, եւ զինքը զրկէ իւր գեղեցիկ ստացուածքներուն մէկէն : Այս խորհուրդս զիշտ ցերեկ զինքը անհանգիստ կընէր, եւ ուսի իրեն մտաբերել տուաւ այն սուկալի գաղափարն որ անմեղ դատարան իւր անհազ ցանկութեանը զոհ ընէ : Իւր հաւասարիմներէն երկու հոգի խրկեց ամբողջ, ուր որ ասպետը իւր կիներն ու աղջիկը տառապանօք կը հեծէին՝ որ այս անմեղ դատարան անուն իրեն բերեն :

Այս բօքալի լուրը Բօզալիին սիրտը խռովութեամբ լեցուց . իւր զաւակն ու իւր մի-

ակ միսիքարուքիւնն էր, քաշել ձեռքէն առնելը՝ իւր կեանքը քաշել առնել էր. շատ ազաշեց աղերսեց Հարդէնեանին մարդոցը որ իւր աղջկէն զինքը չզրկեն :

Այս մարդիկը զինքը ապահովեցին թէ՛ ասպետը կուզէ զանի իւր աստիճանին արժանաւոր վիճակի մը մէջ դնել, եւ իրեն պատշաճաւոր կրթութիւն մը տալ, եւ թէ՛ իրեն ներելի է երբեմն իւր աղջիկը տեսնալ. այս վստահութիւնը քիչ մը միսիքարեց Րօզալիին սիրքը. եւ յորդահոս արցունքներ թափելով փարեցաւ իւր աղջկանն եւ օրհնեց զանի :

Շատ ցաւալի եղաւ իրենց բաժանումը, վասն զի Րօզաման չէր ուզէր բաժնուիլ իւր մօրմէն, եւ քանի որ Հարդէնեանին մարդիկը կը մօտենային զինքը տանելու, սուր աղաղակներ ու նիչեր կը փրցունէր. մարդիկը ձանձրանալով անոր ընդդիմութենէն առանց ականջ կախելու իւր նիչերուն բռնութեամբ քաշեցին առին տարին. խղճալի մայրը զրկուեցաւ իւր միակ զաւակէն ու իւր սիրելի պսակակիցէն՝ որոնք երկրիս վրայ եղած ամէն բանէն աւելի պատուականագոյն էին իրեն



Վայրենամիտ Հարդէնեանը Ռօզամոնսը սպանանելու դիտաւորութեանը մէջ հաստատ կեցաւ . եւ այս սոսկալի գործը Զանկանպուրկի մօտերը եղած հովուի մը յանձնեց :

Ասպետը բերել տուաւ հովիւը, եւ տղան իրեն յանձնեց՝ որ կողովի մը մէջ դրեր ու ըմպելիք խմցունելով քնացուցեր էր, եւ հրաման ըրաւ որ սանի մօտակայ լնին մէջ նետէ :

Հովիւը գնաց լնին եզերքը, եւ Հարդէնեանը քիչ մը հեռուէն անոր ետեւէն կերթար որ յատուկ իւր աչքովը տեսնայ իր հրամանին անբերի կատարումը :

Հովիւը զանի դիտեց . կողովը նետեց լինը, եւ ասպետին աչքին առջեւ մեծ փառեր դնելով անոր մէջ ընկղմեց : Այս գործողութիւնը լմրնցունելով մեկնեցաւ անկէ . եւ ասպետը գնաց ամրոց :

Ան ասէն Ռօզամոնսին մահուան լուրը ամէն տեղ տարածուեցաւ . ասպետը պարապ գերեզմանի մը վրայ տապանաւոր մը դնել տուաւ, եւ Քօնրադէնին ու իւր կնոջը լուր տրուեցաւ իրենց աղջկանը մահը : Խղճալի-

ներք անհնարին ցաւ զգացին . Բօզալի բոլորովին անմխիթար էր . եւ ասպէսն իւր յորդաբուղիս արցունքները չկրցաւ բռնել :

Քօնրադէն ոչինչ տեղը կը յուսար թէ իւր անողորմ ազգականը վերջապէս խելափռելով ազատութիւն կուտայ իրեն : Շաս անգամ անկէ իւր բանտէն ազատիլը խնդրեց , բայց միտ չարդէնեանը ծաղրական պատասխան տուաւ , եւ ուզեց իւր սիրտ ցաւցնելու խօսքերովն եւս առաւել անոր բռնառութիւնը բազմապատկել :

Ան ասէն Քօնրադէն հասկցաւ որ իւր աղաչանքներն օգուտ մը ընելիք չունին , եւ սպասեց որ Աստուած ինքնին իւր անմեղութիւնը յաղթող հանդիսացունէ : Խնդրեց միակ ասպէսէն որ թոյլ տրուի իրեն այն բանտին մէջ կենալ՝ ուր որ իւր կողակիցը բանտարկած էր , բայց սա բարեպաշտական փափակն ալ անընդունելի եղաւ :

Տարիները հոլովեցան առանց իրենց վիճակին փոփոխութիւն մը դիպելու . եւ արդէն վեց տարին լմրնցած էր , երբ շատնցուր-

նէ ի վեր գլխերնուն վրայ կուտակած մրրիկը փարատեցաւ, եւ գեղեցիկ օրեր ծագեցաւ այս բարեսէր ընտանեաց վրայ :

Զօլէնեան Ֆրանսը շատ անգամ խաբուելով Հարդէնեան Հանսէն՝ սաղսկացեր էր այս անգուրք մարդուն խարդախութիւններէն . եւ անոր դէմ պատերազմ հրատարակեց :

Այս անակնկալ լուրը վեր ի վայր խոռովեց Հարդէնեանին սիրքը . գիտէր որ իւր հպատակները գիներ կասեն . չէր կրնար անոնց հաւատարմութեանը վրայ վստահ ըլլալ, որոնք օր քան զօր դիպող առթի մը կրպատէին անոր հպատակութեան լուծը վրանուն նետելու :

Ինչ որ նախագուշակած էր նէ՛ պատահեցաւ : Այն ինչ Զօլէնեանին յառաջ քալելու ձայնը լսուեցաւ, Հարդէնեանին հպատակները խորհեցան անոր ինքնապետական իշխանութենէն ազատելու կերպը :

Հարդէնեան ժողովեց իւր մարդիկը եւ գալեց թշնամույն դէմ . բայց իւր մարդիկը գիներ բողոքին ու հակառակորդին կողմն

անցան, որուն վրայ սասիկ ցաւ զգաց:  
Պատերազմը բացուեցաւ, յաղթուեցաւ,  
եւ բանսարկուեցաւ:

Երբ Հարդէնեանին յաղթուելուն լուրը  
Քօնրադէնին բանսարկուած ամրոցը հասաւ,  
բանսարկելուն վրայ հսկելու կարգեալ շաս  
զինեալ մարդիկ, որ ի ծածուկ նպասա-  
մասոյց եղած էին իրեն, կոսրեցին իւր եր-  
կաքները եւ ազատութիւն տուին իրեն:

Ի՛նչ անպատում ուրախութեամբ այս երկու  
պսակակիցները զիրենի միմեանց հետ միա-  
բանած տեսան՝ որ վեց տարիէ ի վեր իրարմէ  
զատուեւ էին, իրարու թեւ թեւի վրայ իյնա-  
լով գրկախառն փարեցին զիրար եւ լիա-  
շուրթն գոհութիւն վերստաբեցին առ բարձ-  
րեալն Ասուած, որ իրենց երջանկարար ժամը  
վերջապէս հարկանել տուաւ: Տառապանաց  
վեցեակ տարիները մոռցուեցան:

Երբ զիրենի ազատ գտան, մտածեցին առա-  
ջիկայ վսանգներուն վրայ՝ որ դեռ կսպառ-  
նար իրենց, եւ խորհրդակցեցան թէ ինչ  
պէ՛տ է ընել:

Ջանանք, ըստ ասպետք, շուտով մեր ամբողջ հասնելու . անսարակոյս պիտի զգնանք դեռ մեզի անձնանուէր բարեկամներ . որոնք մեզ պիտի օգնեն մեր ժառանգութիւնը վերստին ձեռք բերելու համար :

Չնանչցուելու , եւ իրենց թեւամտոյն հալածմունքներէն ազատ մնալու համար մտան անստոյն մէջ , եւ թուփերու պտուղներ ուտելով անսովոր համբաւներէ գիշեր ցերեկ շարունակ փախցին որ շուտով հասնին :

Չորս օր փախլէն ետք հասան Ջանկանպուրկի մօտերը . եւ երկու մղոն տեղ ունէին հանապարհորդելու . բայց Բօզալի սլ չէր կրնար դիմանալ փախլու , ոտներուն մորթերը սրկրթեր էին , եւ ծանր տենդ մը վրան ուծ չէր թողուցեր , Քօնրադէնին թելին կրթնելով յոգնած ու կիսամեռ հասաւ աղբիւրի մը ետ , եւ այն տեղ մնաց :

Հագիւ թէ քանի մը վայրկեան կար որ հոն հասեր էին , ոչխարներու հովուի ծաղկահասակ աղջիկ մը եկաւ աղբիւրը , սիրուն ակնածութեամբ մը ողջունեց զհանապար-

հորդները . իւր շնորհալի դէմքը ամենախաղա-  
րանմանութիւն մը կազդէր . եւ Ռօզալին չէր  
կրնար կէտանալ այս սիրուն արարածը հի-  
ացմամբ նկատելէն : Թէպէտ եւ իւր հագած  
լաթերը եւ վիճակը անշուք էին , բայց հա-  
մես կերպարանք մը ունէր . ձայնը քաղցրիկ ,  
եւ խօսքերը զգայուն : Սիրուն դասիկը հրաւի-  
րեց Ռօզալին գալ իւր բնակարանը , ուր կը  
զտնաս , ըսաւ , կարեւոր պաշարներ եւ ուղ-  
ղեցոյց մը :

Քօնրադէն շնորհակալութեամբ ընդունեց  
այս հրաւերը եւ կիներ գրկեց բերաւ ծաղկա-  
հասակ հովուհիին բնակած գեղը . հովուհի  
աղջիկը զանոնք տարաւ աղհասիկ բնակա-  
րաններէն մէկը :

Ներս հրամեցէ՛ք , ըսաւ անոնց , հոս լաւ  
ընդունելութիւն կը գտնաք . միմակ կը ցաւիմ  
որ մօրս աչքերը չտեսնար . բայց եւ այնպէս  
մարդավար հիւրասիրութիւն պիտի տեսնաք :  
Հայրս երեկ գնաց , քանի մը օրէն կը վերա-  
դառնայ , ինքը գաւառիս մէջ իւր բարեսի-  
րութեամբը պատուաւոր անձ մըն է . թէ որ

հոս եղած ըլլար շատ ուրախութեամբ կընդունէր զձեզ :

Երկու նանապարհորդները մտան փոքրիկ սրահ մը, ուր պառաւ կոյր կիսն մը նստէր մանած կը մանէր : Քօնրադէն ու Բօզալիսն զինքը ողջունեցին . եւ նա գոհութիւն ցուցուց անոնցմէ ֆաղափար կերպով, եւ տեղեկացաւ իւր աղջկէն հիւրերուն զտնուած վիճակը : Կարեկցութիւն ցուցուց Բօզալիսն այնքան սաստիկ հոգնածութեանը վրայ եւ շնորհաւորեց իւր բարեժաման գալուսը :

Այս կիսը իւր կուրութեամբը զարմանալի յաջողութեամբ կաշխատէր, եւ ոլորած թէլը խիստ բարակ էր : Բօզալիսն ուզեց որ երթայ հանգստանայ . Գլէրան (որ այս աղջկան անունն էր) իսկոյն իրեն մամուռէ լաւ անկողին մը պատրաստեց, ուր խեղճ հիւանդը պառկեցաւ :

Եւ ասպէտը խորտ մը գնաց ընկողմնեցաւ, եւ այնպէս հանգստութեամբ քնացաւ, որպէս թէ փեշալից անկողինի մը վրայ պառկած էր :

Առաւօտուն արթնցան, երկուքն ալ հոգ-

նուրիւններնէն սքափած ու առջի օրուրնէ  
առողջ էին . բարեսիրտ Գլեւան պատաստեց  
իրենց կազմիկ նախանաշիկ մը , որչափ որ  
կը ներէր իրեն իւր աղփասիկ վիճակը :

Կերակուրի ասեն տեղեկուրիւն ստացաւ  
ասպէսը Չանկանպուրկի անցֆերուն վրայօֆ :  
Գլեւան պատմեց իրեն թէ այս ամբողջը դեռ  
Հարդենեանին մարդիկը պաշարած են . բայց  
անոնց մեծ մասը դժգոհ ըլլալով իրենց հին  
տէրոջմէն՝ կը մտաբերէին Չօլէնեանին կողմն  
անցնիլ :

Ամէն մարդ կը ցանկայ , ըսաւ , Դալէնեան  
ասպէսին կենդանութեանը . վասնզի ամէն  
մէկը զինքը հօր պէս կը սիրէին , բայց կեն-  
քադրեն թէ շատնցուրնէ մեռած է : Հարդեն-  
եանին հպատակները իմանալով որ Չօլէնեան  
ասպէսը իրենց տէրը բանտարգեր է , ասկէ ի-  
րեք մղոն հեռու գեղ մը ժողովուած են ներ-  
կայ պարագաներուն մէջ պաշտան կերպով  
գործ տեսնալու համար խորհրդակցելու :  
Հայրս հոն գնաց :

Քօնրադէն այս լուրը առնելով քիչ մը սքր-



սոսեցաւ: Քանի մը ժամէն վերջը Գլերան  
սուն եկաւ լուր բերելով թէ՛ Հայրը վերա-  
դարձեր կուգայ: Ծերը եկաւ ներս մտաւ, որ  
բարձրահասակ մարդ մըն էր, իւր դէմքին  
վրայ նկարագրուած կը տեսնուէր կատարեալ  
մարդասիրութեան ու բարեսիրութեան նը-  
շաններ:

Իւր աղջիկը վիզը ցաթկեց, եւ փարելով  
նմա համբուրեց զնա. յետոյ ցոյց տուաւ իրեն  
իւր բացակայութեան ատեն եկած երկու հիւ-  
րերը: Ծերը ձեռքը ասպետին երկնցնելով շը-  
նորհաւորեց անոր եկաւորութիւնը իւր սնակը:

Պատմեց իւր կնոջը թէ վերադարձիս ծերու-  
նի Յակոբը *յակոբդին մահու գնալով աստ-  
իկ վշակնեցայ*, եւ շուտով պիտի վերադառ-  
նամ անոր հովը. վասն զի իմաց տուաւ՝ ին-  
ծի յայտնելու կարեւոր գաղտնիք մը ունենալը:

Շատ արտոնօք եկայ ըսաւ իրենց՝ ձեզի մեր  
հաջ Գալէնեան ասպետին ազատութեան լու-  
րը բերելու համար: Այս ուրախառիթ լուրը բո-  
լոր գաւառին մէջ տարածելու պիտի երթամ, որ-  
պէսզի անմիջապէս ջանան երթալ փնտնել

զասպէսր՝ որ թերեւս հիմա անսառաց մէջ է :

Ամէն մէկը այս լուրին վրայ գոհ ըլլալ երեւցան . վասն զի ասպէսը իւր բոլոր հպասակներուն սիրելի եղած էր :

Ասպէսն ու իւր կինը խնդում երես իրարու նայեցան, եւ այն ատեն հասկցան առաքինի արտի մը պատրասած ընդհանուր ուրախութիւնը :

Քօնրադէն ըսաւ ծերին, դու ժողովէ գեղացիները հոս, ես Քալէնեան ասպէսին վրայօք կրնամ տեղեկութիւններ տալ :

Քանի մը վայրկեանէն յետոյ բոլոր գեղացիները ասպէսին օրեւանին դրան առջին ժողովուեցան :

Երբ Քօնրադէն երեւցաւ, քանի մը անձինք որ զինքը նանչնային, աղաղակեցին . սն է մեր բարի Քալէնեան ասպէսը . եւ բազմութիւնը կրկնեց . կեցցէ՛ Քալէնեան ասպէսը, ամէնքը նորա չորս դին բոլորելով, կը փափաքէին իւր ձեռքը սեղմելով զինքը շնորհաւորել, որոյ ներկայութիւնը ընդհանուր ուրախութիւն կը պատճառէր ամենուն :

Երբ մօտակայ գեղը իմացուեցաւ ասպե-  
տին ողջ ըլլալը ու Նէօհանասան հասնիլը,  
մեծ ու պզտիկ վագեցին հոն: Ամէնքը կու-  
զէին զիմքը տեսնել, իրեն համար պատե-  
րազմիլ, եւ օգնել իրեն իւր ամրոցը կրկին  
ձեռք բերելու համար:

Գեռ իրիկուն չեղած Քօնրադէն իրեն հա-  
մար արիւննին քափելու պատրաստ չորս հա-  
րիւր հոգիի գլուխն անցած, խաղաց գնաց  
գեղը, ուր առաւօտուն ժողովուր էին պա-  
տերազմին գործողութեան կերպին վրայ խոր-  
հելու համար: Գունդը անցաւ գնաց գեղին  
մէջ, այս տեղ կը բնակէր ծերունի Յակոբը,  
եւ կանչել տուաւ Քօնրադէն ըսելով թէ շատ  
հարկաւոր բան մը ունիմ իրեն հաղորդելու,  
բայց նա նոյն օրը իւր նպատակին հասնելու  
հարկադրած ըլլալով չը կրցաւ ծերոյն փա-  
փաքը լեցունել:

Թէպէտ եւ ժամանակն ուշ էր, բայց եւ  
այնպէս ուզեցին որ նոյն գիշերը յարձակին  
Զանկանապուրկի վրայ: Կէս գիշերուն առա-  
ջին յարձակումը տուեցաւ, երկրորդին հարկ

չեղաւ : Վասն զի պահապան զօրքերը Հար-  
դէնեանին հարսահարութենէն տաղկացած  
էին . ուստի երկու ժամու շափ իրարու հետ  
խօսակցելէն յետոյ շարժական կամուրջը ի-  
ջեցուցին եւ ամրոցը դարձեալ իւր բուն տե-  
րոցը յանձնեցին : Գալէնեան ասպետը ա-  
ռանց կաթիլ մը արիւն քափելու մտաւ ամ-  
րոցը :

Հետեւեալ օրը իւր հպատակները միաբա-  
նութեամբ եկան նորէն իրենց հաւատարմու-  
թեան երդումը իրեն մատուցանելու :

Բօզային իւր հիւանդութեանը պատճառաւ  
ծերոյն հիւղը մնացեւ էր : Իւր պսակակցին  
յաղթութեան լուրը զինքը զօրացուց : Քլէրան  
ուրախակից եղաւ իրեն այս բերկրառիթ լու-  
րին վրայ :

Քօնրադէն իւր կինը բերելու համար պատ-  
գարակ մը խրկեց ամրոցէն : Երկուքը մէկտեղ  
իրենց վճակրութեանցը վախճանը տեսնա-  
լով գոհացան զԱսուծոյ, որ իրենք յաղթող  
հանդիսացուց իրենց թշնամեացը վրայ : Եւ  
արդարեւ իրենց վերանորոգ երջանկութեանը

բան մը չէր պակսէր, եթէ ոչ մինակ իրենց սիրելի Ռօզամոնսը :

Կէս օրէն ետքը գաւառին աղջիկներն իրենց պարագլուխ ունենալով Քլէրան միաբանութեամբ եկան ներկայացան ամրոցին առջին, ասպետն ու Ռօզալին շնորհաւորելու համար : Քլէրան շնորհալի կերպով մը ողջունեց զանոնք, ու ծաղիկներու փունջ մը մատոյց անոնց . եւ ընկերներուն հետ մէկտեղ ցնծալից ձայնիւ գեղեցիկ երգեր երգեց ի պատիւ այս երկու պսակակիցներուն :

Ռօզալին գրկեց իւր սիրելի Քլէրան, որ իրեն այնչափ վեհանձն օգնութիւն մը նուիրեր էր : Սիրելի գաւակս, ըսաւ իրեն, կուզեմ խնդրել հօրմէդ որ թող սայ քեզի իմ բովս կենալու, ինծի ընկերակից ընելու համար կարօտեմ դեռահասակ աղջկան մը . քեզ տեսնալով յիշեցի իմ սիրելի Ռօզամոնսս, որ բու սարիֆդ էր, եւ քեզի պէս սիրուն ու բարեբնոյթ էր :

Քլէրան հօրը երեսը նայեցաւ դիտեց, թէ ինչ կրսէ. եւ նա ըսաւ իրեն, սիրելի աղ-

ջիկս թէ որ կը հանիս ասոր, ես չեմ կրնար  
արգիլել : Աղջիկն անասեն իւր պաշտպանին  
հով կեցաւ :

Նոյն վայրկեանին ծեր մարդ մը ներս մտաւ,  
եւ իմաց տուաւ ասպետին թէ ծերունի Յակոբը  
ամբողջ եկեր եւ անպատճառ կուզէ իրեն հետ  
խօսիլ : ասպետը հրաման ընելով ծերուն  
Յակոբն առջին բերուեցաւ :

Պարոն ասպետ, ըսաւ ծերունին մարած  
ձայնով մը, Աստուած իւր առասպելդ օրհ-  
նուքիւնը հու ընտանեացդ վրայէն անպակա-  
սելի ընէ : Ահա մահս կը մօտենայ, եւ արիս  
մէջ գաղտնիք մը ունիս գոր չեմ կրնար հետս  
գերեզման սանիլ :

Քու Ռօզամոնտ աղջիկդ բնական մահուամբ  
մեռած չէ, Հարդէնեան ասպետը ուզելով  
զանի կորսնցնել՝ զիս ընտրեց իւր անօրէն  
խորհրդոյն կատարմանը համար : Տղան կո-  
ղովի մէջ քնացուցած ինծի տուաւ, եւ հրա-  
ման ըրաւ որ սանիս զանի լին մը նետեմ :  
Երբ բաժնուեցայ, վայրենամիտ ասպետը ե-  
տեւէս կուգար տեսնելու համար թէ իւր հրա-

մանն անքերի կը կասարեմ: Ես զինքը դի-  
սեցի: Լնին եզերքը հասնելով՝ տղան թուփի  
մը մէջ զեփեցի եւ պարսպ կողովը նեփեցի  
ջուրը, եւ մէջը քարեր դնելով ընկղմեցի:  
Ասպէս աղջկանը մահուանը վրայ ապա-  
հով ըլլալով մեկնեցաւ:

Ո՛հ աղջիկս դեռ ո՞րչ է, աղաղակեց Բո-  
գայի:

Ազնիւ սիկին, ըսաւ ծերունի Յակոբը,  
խօսքս մի ընդհատե: Երբ տղան փնտնելու  
գացի, դժուարին մտասանջութեան մէջ ին-  
կայ թէ՛ ինչպէս կարող ըլլամ պահպանելու  
զինքը. վասն զի անկարելի էր ինծի անի ա-  
ռանց կարծիքներու տեղի տալու մեծցունել.  
ուստի տարի Բօգամոնսը իմ Բիւքուէտ անուն  
բարեկամիս տունը, որ է Քլէրային հայրը. իրմէ  
պահեցի դեռաբողբոջ աղջկան որն ցեղ ըլ-  
լալը, եւ ապաչեցի իրեն որ ծածուկ մեծցու-  
նէ զանի: Եւ թէ որ դուք բռնութեան մէջ  
մեռնելու ըլլայիք, տղան վստահի մը չհան-  
դիպելու համար, գազնիքս մէկու մը չվըս-  
տահացայ. բայց որովհետեւ Աստուած հանե-

ցաւ ձեզ վերսին ձեր ժառանգութեան մէջ  
բերելու . երջանիկ եմ այսօր կարող ըլլա-  
լուս համար ձեզի իմաց տալու թէ՛ Քլէրան  
ձեր բուն Բօզամոնն աղջիկն է :

Ամենուն բերնէն զարմացման ցնծալից ա-  
ղաղակներ փրթան : Քլէրան ու իւր որդեգիր  
հայրը ապշեր մնացեր էին :

Ազնուամեծար Յակոբ, ըսաւ Բօզալին ձե-  
րին, շեմ տարակուսիր քու խօսքերուդ նշմար-  
տութեանը վրայ, բայց սա կըսեմ քեզի որ,  
Բօզամոննը աջ թելին վրայ նշան մը ունէր,  
պէտք է որ զայն տեսնեմ :

Հոս եկուր սիրելի Քլէրաս ցոյց տուր թեղ-  
տոյց ինքն է, պօռաց Բօզալի, դու ես իմ  
սիրելի աղջիկս . եկու եկու գիրկս, եւ փո-  
խարէնը հասն ինձ քու գորովալիւ սիրովդ  
իմ աղբիւրաբար արցունքներուս՝ որ քու վը-  
րադ թափեցի :

Քրկեց ասպէսն իւր աղջիկը ջերմեռանդ  
փափափով, եւ բոլոր հոն ներկայ եղողները  
զարմանալով այս սրտաշարժ տեսարանին  
վրայ աղաղակեցին, կեցցէ՛ Բօզամոնն :



Ընդհանուր ուրախութիւնն այլայլեցաւ Յակոբին մահուամբբ' որ դեռ երեկոյ շեղած նոյն օրը մեռաւ :


Ասպէս անոր յիշատակը պատուելու համար ամրոցին բակին մէջ հոյակապ շիրիմ մը կանգնել տուաւ :

Զօլէնեան ասպէս Զանկանպուրկի մէջ եղածները լսելով վախցաւ ասպէսին հպատակներէն' որ միաբաներ էին իրենց տէրը պաշտպանելու համար . եւ ետ կեցաւ իւր աշխարհակալութեան գաղափարն աւելի յանաջ սանելէն :

Դալէնեան ասպէսն իւր ժառանգութեանը մէջ վերադառնալէն յետոյ իր հպատակներուն մէջ անդորրիկ խաղաղութիւն մը վայելեց , եւ ջանաց իւր հպատակներն երջանիկ ընելու :

Հարդէնեան ասպէսը թուառաբար կորեաւ . բանտէն ազատել ուզելով' բանտին պահապաններէն սպանուեցաւ :

Քօնրադէնին ու իւր առաքինասէր կողակցին գերեզմաններն ոռոգեցան իրենց երջանիկ ընելու աշխատած մարդիկներուն սրբաբուղիս եւ անկեղծ արցունքներովր :



ՄԱԹԻԼՏ

Պէրլինի երեւելի գաղթականներէն Ֆար-  
նէն անուն անձ մը երկու աղջիկ զաւակ ու-  
նէր, որոնց անունն էր Մաթիլտ ու Քարօլին.  
գորոնք կը ջանար կրթելու առաւել իւր օրի-  
նակովը, քանքէ իւր խօսքերովն Աստուծոյ  
երկիւղին ու սիրոյն մէջ: Անոնց կրթու-  
թեանը վերաբերեալ բան մը զանց չէր ընէր,  
եւ մեծապէս կը ջանար անոնց ձեռք բերել  
սալ այնպիսի գիտութիւններ՝ որոնք կրնա-  
յին գիրենք աշխարհիս մէջ երեւելի ու փա-  
ռաւոր ընել:

Մաթիլտ յաջողակութեամբ կը սովորէր նուա-  
գածութեան արհեստն եւ անթոյլ կաշիասէր,  
որով իւր հօրն ըրած ծախքերն ոչինչը չէին  
երթար: Ամէն առտու կանուխ կելլար, ա-  
ղօթքը կընէր, եւ կը վագէր նուագարանին

բով : Վերջապէս հանապազօրեայ աշխատանքներու քիւնն ու բարեւարտութիւնը Մաքիլսին բնաւորութեանը պայծառափայլ ընթացքն էին :

Ասոր հակառակ Քարօլին միշտ անհոգ էր, որ կոսնակապէր իւր յառաջադիմութիւնը : Ամէն օր ուշ կը զարթնուր, երկու ժամ ինկզիսքէն զարդարելու կը զբաղէր . եւ դեռ իւր ծնողքն ողջունելէն զաս ուրիշ գործ մը չտեսած նաշին ժամը կը հասնէր :

Նախանաշէն ետք Մաքիլս կաշխատէր, իսկ Քարօլին բազմոցին վրայ երկնցած փեղոյի մը ժապաւէնները կը յարդարէր . գիրք մը կը թղթատէր, կամ շատ անգամ բնաւ գործ մը չէր գործէր :

Հօրը խրատներն ամենեւին շահ մը չէին ընէր, եւ երբ անոր անհոգութիւնը կը յանդիմանէր, կը դժգոհար պատասխան տալով թէ՛ երբ մարդ մը հարուստ ու գեղեցիկ է, նա միշտ բաւական տաղանդներու տէր է : Ես չեմ ամենեւին ցանկար քոջս նմանելու որ կարծես թէ իր հացը նարելու կաշխատի : Արուես-

սագէտս ըլլալը գեղջուկ մարդու օգտակար է ,  
որ չուզէր ալ սակաւապէտ կեանք վարել :

Մաթիլտ իւր քրոջն այսպէս իրաւաբանելը  
լսելով ուսերը վեր վեր կը վերցնէր , եւ կը  
հաստատէր թէ սակաւապետութիւնը մարդս  
զգաս ու արթուն կըրնէ . եւ յիրաւի երբ որ  
մարդ մը արհեստ մը սովորելու կաշխատի ,  
պէտք է որ զգաս ու արթուն ըլլայ :

Քարօլին կը ծիծաղէր այս խօսակերտուն վը-  
րայ , արդէն կը տեսնամ ինչ , կըսէր իրեն , որ  
գեղեցկազարդ սրահներէն մէջ կը գովաբա-  
նիս իբրեւ քաղաքին ամենէն ընտիր նուա-  
զածուններէն մէկը . պիտի դողաս ու սարսա-  
փիս վեցհարիւր քրննիչներու առջեւ , եւ այս-  
քան ընդերկար աշխատութիւններուդ մրցա-  
նակ պիտի ընդունիս գրեթէ ազատական ա-  
րուեստներու մէջ քաջանուն մը , ու ծափա-  
հարութիւններ : Այնքան քաջած աշխատ-  
ութեանդ գեղեցիկ բերկրութիւնը պիտի ըլլայ  
ուրիշները զքօսցնել եւ գրեթէ անոնցմէ քրն-  
նուիլ :

Քարօլինին ծաղրաբանութիւնները Մա-

քիլքը աշխատասիրութենէ եւ չձգեցին, եւ շուտ մը այնչափ յաջողակ եղաւ նուագածութեան մասին, որչափ որ յաջողակ եղաւ գիտութիւններու ու լեզուաց մէջ: Ամէն տեղ զինքը կը գովէին, եւ փափաքաւոր կը փրկուէր, իսկ Քարոլին համարում մը չունէր, տեսաւ որ սոսկ գեղեցկադիմութիւնն ու զարդարանքը միշտ այլոց մտադրութիւնը չեն գրգռեր, թէ որ առաքինութիւններու ու բարեմասնութիւններու հետ կցորդած չըլլան. ասոր ներհակ տաղանդներու գօրութիւնը ամէն տեղ կը նանչցուէր ու կը յարգուէր:

Երբ այս նշմարութիւնը կը սկսէր լուսաւորել իւր միտքը, դժբաղդաբար աւելի յամառեցաւ անոր վրայ չմտածելու:

Քաղաքական անակնկալ դիպուածները մեծամեծ փոփոխութիւններ բերին հասարակաց կալուածներուն սովորութեանը մէջ: Շատ գաղթական մարդիկ բոլորովին կործանեցան, եւ իրենց ծանուցեալ խոհեմութեամբն ու պարկեշտութեամբը չկրցան իրենց վիճակը ազատել այս վերահաս դիպուածներէն:

Այս կարգէն էր եւ պարկեռ Ֆարնէն՝ որ բոլորովին աննման էր իւր անպակաս քրննիչներուն, որոնք որ վանառականի մը սրնանկուրթամբը կը հարստանան, ուզեց որ իրեն կալուածներ վստահացողներուն անթերի վնարումն ըլլայ, եւ անոնցմէ ոչ մէկն ամենափոքր վնաս մը կրէ: Ծախեց իւր բոլոր ստացուածքը, ազնիւ կան կարասիները, ու իւր նոյս գրանցը՝ որ Մաթիլսին գուարնութիւնն էր: Իւր առաքինի պսակակիցը տուաւ իւր գոհարեղէնները, զարդերը, նմանապէս իւր աղջիկներունը, ու Մաթիլսին նուագարանը եւս. այսպէս ինչ որ ունէին ամէնքն ալ վանառեցիի եւ ստակ մըն ալ չը մնալով՝ իրենց փոխատուներուն վնարեցին պարսֆերնին:

Ֆարնէն չկրնալով ալ քաղաքական ընկերութեան մէջ ունեցած կարգը պահել, քառուեցաւ Մէրլանհէն գեղը:

Քարօլինը կտաւագործ կնկան մը քով աշակերտութեան տուաւ՝ որ այս գոռոզ աղջկանը շատ նեղացուցիչ եղաւ: Մաթիլս մտաւ նուա-

գագործի մը քով արդէն որ շատ ասէն իրեն վարպետութիւնը քած էր : Անոր գործարանը կը կենար, եւ դասաստուութիւն կը կեր իւր աշակերտուհիներուն : Երբայով համբար սարածեցաւ, եւ քիչ ժամանակի մէջ կարող եղաւ չէ թէ մինակ իւր ապրուստը հարելու, հապա նաեւ մեծապէս ձեռնու ըլլալու իւր սիրելի ծնողացը ամէն կարօտութիւններուն :

Ֆարնէն տիկինը որ երկար ասէն իւր մեծապայծառ սրահը պատուաւոր ընծայացուցած էր, խոշոր հանդերձներ հագած ինքնին կը կատարէր իւր խոհարարութիւնը, փսիաթէ փեղոյր մը գլուխը դրած իւրովի վանառանց կերթար իւր պէտք ըլլալու բաները գնելու :

Իւր այրը դեռ տարիքն առած չըլլալով ուժով էր. փայտ կը սղոցէր, փոքրիկ պարտէզ մը կը մշակէր, եւ անհնարին դժուարութիւնով իր անձը պահելու ապրուստ մը կը հարէր :

Այս պատուելի մարդը որ երբեմն երեւելի ընկերութիւններէ հրաւիրուած էր, եւ ինքը մայրաքաղաքին տաղանդաւոր մարդիկներէն շատերը իւր սեղանն ընդունած էր, առանց



սրնջալու սաժանելի աշխատութիւններ կը կատարէր. երբ ձախողակ մտածութիւններով հակսին վրայ սրմութեան կննիո մը երեւար , ան նոյն սրմութեան մէջ յԱսուած ապաւինելով զինքը կը հանդարտէր. վասն զի բարեգործ մարդն իւր բոլոր վստահութիւնն Աստուծոյ վրայ կը դնէ :

Տարի մը այսպէս անցաւ : Քարօլին այս նոր վիճակին պարտաւորութիւնները սրնջալով կը կատարէր , հազիւ թէ իւր կարօտութիւնները լեցունելու շափ բան մը ձեռք կը բերէր : Անարժան կը թուէր իրեն ծրարներ ծախել , եւ նստիլ մի եւ նոյն տապալակ վրայ , ուր որ կը նստէին գործաւոր աղջիկները , որոնց ուր ուրեմն այնչափ արհամարհանքով հրամայած էր կտաւագործ կիներ . մանաւանդ իրեն շատ պզտիկութիւն կը համարէր , երբ կը տեսներ իւր հօրը տունը եկող անձանց հոն գալը , որոնք կը տեսնէին զինքը որ կտաւագործ ըլլալու վիճակին հասեր է : Երեսին վրայ երեւցած յանկարծ կարմրութիւնը ցոյց կուտար իւր սրտին խռովութիւնը , աւելի լա

կը համարէր մեռնիլ, քան թէ նանչցուիլ :  
Իւր սրճնեղութիւնն աւելի եւս կէւելնար  
իւր համբակութենէն, եւ շատ անգամ իւր  
վարպետահիէն յանդիմանութիւն կը լսէր :

ՄաքիլՏ ընդհակառակն գիտէր, իւր քոյրը,  
եւ ընտանիքն անակնկալ ձախորդութիւնով  
ինկած վիճակնուն հանելու փափաքանօք  
սրճոսած ուրախութեամբ ու մեծազան փու-  
թով կաշխատէր, ու կը կատարէր ինչ որ իրեն  
կը հրամայուէր. եւ գոհութեամբ սրճի կը տա-  
նէր իւր նոր վիճակը՝ որ շուտով հասոյց գիտ-  
էր ընտանեկան վիճակի. գործարանին բոլոր  
գործաւորներուն գլուխ կարգուած էր, ծաղ-  
կահասակ աղջկանց նուագածութեան դա-  
սասնութիւն կընէր, եւ ինքն իւր արհեստին  
մէջ կը կատարելագործէր. այսպէս երթալով  
իւր յարգի վարպետը գիտնէ եւս աւելի կը սի-  
րէր. եւ վերջապէս շուտով ընդունեց այն-  
չափ առաքինութեան ու աշխատասիրութեան  
մրցանակը :

Մէրլանհէնին անապատականները, այ-  
սինքն ծնողքը, ընդերկար համբերեցին իրենց

աղջկանը սիրով, որուն կը կարօտէին իրենց աշխատութեանցը մէջ իրենց օգնական ըլլալու համար, առանձնութիւնն իրենց քաղցր կուգար իւրեանց հոյակապ պալատէն աւելի:

Քարօլին իւր քրոջն օրինակէն յորդորուելով սկսաւ մտադիւր աշխատիլ, եւ յաջողակութիւն ունենալով շուտով գերազանցեց իւր փոքրիկ ձեռագործներուն մէջ՝ որ կանանց համար հանոյական նիւթ մըն է. կարն խօսքով ըսենք. բոլոր ընտանիքը բաղդին անհաստատութիւնը կրցան բանի տեղ չդնել, եւ սակաւապետութեան ու աշխատութեան մէջ ամենաքաղցր խաղաղութիւն մը վայելել: Բայց աւնալ, ասի երկար չեցեց: Ֆարնէն տիկին չէր կրցեր առանց ցաւոց այնպիսի փառաւոր վիճակէ մը յետին չփառութեան մը մէջ իյնալ: Ոչինչ տեղը կը ջանար իւր սրտին անձկութիւնն իւր պսակակցէն պահելու, եւ յանկողին հիւանդութեան իյնալով իւր ջանքերը վերջաւորեցան: Մաքիլս իւր մօրը հիւանդութիւնը լսելով ձգեց Պէրլին ու բռնու-

նի պէս թուաւ եկաւ անոր ֆովր զանի խնամելու համար : Քարօլին եւս ուզեց զործակից ըլլալ իւր ֆրոջն այս սրբազան պարսաւոքիւնը կասարելու մասին :

Երկու ֆրոջ սրտի մտօք ըրած փութաջան խընամբները թող չտուին հիւանդութեան յառաջադիմութիւններ ընելու : Մաթիլս Պերլինէն հարսար բժիշկ մը բերել տուած էր, իւր արուեստին բոլոր օգնութիւններն իւր մօրն անխնայ մատակարարելու համար :

Ֆարնէն սիկիւնին հիւանդութիւնն երկարատեւ հիւժական ախտ մը ըլլալով՝ Պ. Պէրկման , որ բժշկին անունն էր, անոր բժշկութեանը վրայ ֆիչ յոյս ունէր, բայց եւ այնպէս իւր հիւանդութիւնն անզգալի ընելու համար խրատեց իւր աղջիկն որ ֆովի սենեակը ֆնարերգութիւններ ընէ :

Մաթիլս սկսաւ ֆաղցր ձայներով երգել, եւ նշանաւոր հարսարութեամբ հնչեցնել Քերմանացի նուագածուներուն գեղեցիկ եղանակները : Մայրիկը չձանձրացնելու համար երբեմն ամենաֆաղցր իւրալի երգեր կը հըն-

չեցներ, երբեմն ուրախական նուագներ՝ որոնք խեղճ հիւանդին նակսին վրայ երբեմն կենաց նառագայթ մը կը ցոլացնէին:

Մէղք, կրսէր Ֆարնէն սիկիւր, որ չգոհացայ Աստուծով ինձ ասանկ հաննարեղ աղջիկ մը պարգեւելուն համար. որ այնչափ արիւնքով սոված ուսմունքներուն նախընծայ պտուղը կը նուիրէ իւր հիւանդագին մօրն օգնութեանը:

Քարօլին իւր քոջը տուած գովութիւնները լսելով կը հառաչէր. թէպէտ եւ չարասիրտ չէր, բայց նախանձէն կը հալէր ու կը մաշէր:

Կերբար կառանձնանար ու կը սկսէր լալ. հայրը վրայ հասնելով կը հարցնէր լալուն պատճառը, բայց նա կը ջանար ծածկել անկէ իւր սրտանմիկ ցարը:

Ինչո՞ւ համար, կրսէր ինքնիրեն, մօրս վրայ ունեցած այնչափ խնամքներս պաղ կերպով մը կընդունուին, միթէ Մաթիլտին չափ սէր չունիմ իւր վրայ, իմ սիրոյս փորձերը օրը հազար անգամ ցոյց չեմ տար: Բայց չէ, ես անոր պէս հանոյական տաղանդներ չեմ տես-

ցած, ու իմ բոլոր անձնանուէր սպասահարկութիւններս բանի մը տեղ չեն անցնիր. քանի որ ես երեսի վրայ մնացած եմ, ամէնք կը վազեն Մաթիլտին հով, եւ կը ջանան հանոյանալ անոր:

Բարի Մաթիլտ միտք դնելով անոր վրայ երեւցած սրտուքեան զգածմունքներուն՝ շարակուսեցաւ որ անոր պատհառք նախանձն եղած ըլլայ, կարծեց թէ իրենց մօտը հիւանդութենէն յառաջ եկեր է: Սյապէս այս ազնիւ աղօջիկն ամէն կարելի միջոցները ձեռք առաւ զանի մխիթարելու համար:

Օր մը մինչդէռ մայրերնին կը բնանար, Մաթիլտ պարտէզ իջաւ, եւ սարփիկնայի մը սակ գտաւ իւր Քարօլին հոյրը, երեսին գոյնը նետած եւ աչկերը կարմրած, որով յայտնի եղաւ լացած ըլլալը:

Հարցուց իրեն Մաթիլտ. ինչ կայ իմ սիրելի հոյրս, վշտացած կերեւաս: Բնն չկայ, ինչ պիտի ըլլայ. մեր մէջը կը գտնամ սրտելու պատհառք: Բայց ես ետգ սաստիկ վհասութեան մէջ տեսայ, ըսաւ Մաթիլտ. մեր

մօտը հիւանդութիւնն անսարակոյս շատ վր-  
սանգաւոր է. բայց Պ. Պէրկման զինքը մեռ-  
նելու վիճակի չդրաւ. դեռ յոյս բողուց մեզ  
անոր ազատութեանը վրայ :

Ո՛հ նւր էր, Ասուած սայ, Ասուած տայ,  
ան շատ բարի է, մեր երկուքն ալ էլ վելօք կը  
սիրէ: Բայց քեզ եւս առաւել կը սիրէ, քէզ.  
դու այս օր մէջ նախապատիւ համարուած  
ես, ու ես ոչինչ, ինչպէս որ գիտես :

Կը խաբուիս, իմ սիրելի Քարօլինս. երբէք,  
ինչպէս որ կը կարծեմ, մեր ծնողքը քեզի ցա-  
ւելու պատճառ մը տուած չեն :

Ճշմարիտ է որ առանց անիրաւութեան չեմ  
կրնար ամբաստանել զիրենք, թէ ծայրայեղ  
կողմնասիրութիւն ունեցած են. բայց երբէք  
զիս իրենց գորովալիւ սիրովը սիրած չեն :

Իրաւունք չունիս, բոյրս, չիյսեմ թէ ասանկ  
վիճակի մը մէջ ինչ բան կրնայ քեզ դժուա-  
րացնել մեր ծնողացը դէմ որ կը սիրեն զքեզ :

Ես իմ ստորին աստիճանս կը նանչնամ,  
կրկնեց Քարօլին պաղ կերպով մը. քեզի պէս  
նարսարութեամբ մասիս ծայրովը նուագա-

րան հնչեցնել չեմ գիտեր, եւ այդպէս գեղեցիկ եղանակաւ երգել. ասոր համար համարում չունիմ. իմ խնամքներս աղախինի մը սպասաւորութեանը չափ յարգ չունին:

Հասկցաւ անասեն բարեսիրտ Մաթիլտ, թէ իւր կարծածէն զաս ուրիշ պատճառ ունի եղեր անոր արտին տրամաբիւնը, եւ իւր դիւրագգաց սիրտն էլելով վշտացաւ անոր վրայ:

Կերպ կերպ մխիթարութիւններ մատուց Քարօլինին. բայց այս թշուառ աղջկան սիրտը քարանայով՝ սմարդի խտութեամբ մը մէկդի հրեց զանի:

Այս վայրկեանէն յետոյ մեծ պաղուծին մը տիրեց երկու քոջ մէջ: Մաթիլտ ամէն օր կը ջանար անոր սիրտը քաղցրացունելու իւր վրայ, բայց նա անոր ամէն ջանքերուն առջին անգգայ կը մնար:

Օր մը երբ որ բոլոր ընտանիքն ու բժիշկը մէկտեղ ժողովուր եին, հիւանդը՝ որուն առողջութիւնն որ հետզհետէ կը պակսէր, խընդրեց իւր աղջկէն որ իրեն գեղեցիկ տալ մը երգէ՝ որն որ լսելով շատ ուրախութիւն կը գգար:



Մաթիլ՝ զնաց բերաւ իւր նուագարանը ,  
Եւ սկսաւ հետեւեալ շնորհիմաստ տալը երգել :

Կը նանչնա՞ս դու այն սուրբ երկիր ,  
Ուր ցաւագին ձայն չըլսուիր ,  
Եւ ոչ բրնաւ արտասուբներ  
Սնդ կը հոսեն մերքս աչբեր :

Կը նանչնա՞ս զայն վայր բերկրարար ,  
Ուր կը վայլէ մարդ բարերար  
Ըզգործքս զոր աստ նա արար՝  
Կեանքս անմահ երջակարար :

Կը նանչնա՞ս այն ազնիւ նամբան՝  
Որ լուսեղև ածէ կայան՝  
Ուր որ գործով արդարանան ,  
Եւ հաւատքով պայծառանան :

Մարդ մեղսասէր որ խոսորի՝  
Յայս երջանիկ նանապարհէն ,  
Ի յանվախնան տարտոնսի  
Հալի մաշի անեղ բոցէն :

Բայց թէ սիրտն ի վեր ուղղէ,  
Ի բաց հերիէ սիմ պատրանքներ,  
Եւ մոլութեանց չը զակասէ,  
Կը ժառանգէ անմահ փառքեր:

Անհաստատ դու ուխտագրեաց  
Ջանա երթալ անխոստած՝  
Մտիւ հոգևով հանդարտացած՝  
Յերկնից գալառ խաղաղակեաց:

Որ խոստած երկնից ճամբէն՝  
Կերթալ օտար առապարէն,  
Յաստանալից Գասաւոր մը՝  
Իւր դէմը կէլանէ անդէն:

Նա բանական՝ է մարդ մինակ՝  
Երկնից ուղին է հետեւակ,  
Իսկ շարքն անդ կը կրթո՞սի,  
Միտք ցընորած կերերո՞սի:

Ես հեզ կերգեմ ո՞վ մարդ գոյակ՝  
Կը հանաչէս դու այն միակ՝  
Մարդ Բարեկամն Աստուած էակ՝  
Քուս փրկութեան եղաւ խնորակ:

Ի սէր փոյին ի խաչ ելաւ,  
Զինու ի սէգ սուր խոցեցաւ,  
Ասուած մարմնով չարչարեցաւ,  
Առուն լուայ կարմիր ներկաւ :

Դու հաւասնն սիրելի  
Իւր սէրն ունի միշտ անհեղիլի .  
Մի դու բլար իժ ունկնախից,  
Լքսէ Անոր կենաց բանի :

Դու թէ բանաս ականջիդ դուռ՝  
Ասուածեղէն ձայնին ի լուր .  
Կերկրնցունէ անուշտ ֆեզի  
Ըզձեռն իւր պարգեւասուր :

Կը պաշտպանէ ազասութեամբ  
Ամենակալն իւր գորութեամբ,  
Զի նա չարին է եւ բարոյն  
Միշտ բարեւար սիրոյ սարփամբ :

Չանացիր երթալ նայն համբան՝  
Յորոյ կէտին երջանկական՝  
Կայ կառուցեալ փոյ օրեւան՝  
Որ արդարոց է բնակարան :

Երգոյս նուագ ըզմըսաւ ան,  
Սիրսըդ ուղղէ դէպ ի յԱսուած,  
Քէ դու արդար կամ մեղաւոր՝  
Վասան եղիր յԱյն յուսացած:

Այս երգը լսելով Ֆարնէն սիկին ի խոր  
urst հառաչելով ըսաւ. այն, շուտով պիտի  
նանչնամ ես այն երկնից գեղեցիկ գաւառը:

Շնորհակալ եմ քեզմէ իմ Մաթիլսս. բու  
փութաջան խնամքներովդ էր որ ինչուան հի-  
մա վրաս քիչ մը ուժ մնաց, դու պաշտպա-  
նեցիր զայն: Եւ ելաւ ջերմ սիրով մը գրկելով  
զանի ըսաւ. շնորհակալ եմ շնորհակալ, իմ  
սիրասնունդ աղջիկս. դու ես մեր պահա-  
պան հրեշտակը:

Այս արտառուչ տեսարանին վրայ Պ. Պէրկ-  
մանին սիրեն ելլելով՝ սիրով Մաթիլսին ձեռ-  
քը սեղմեց:

Զասոնք տեսնելով Քարոլին այլայլեցաւ,  
եւ իսկոյն ետ քաշուելով զնաց պարտէզ իւր  
urstին ննուամբ հովահրելու համար: Կարօտ  
էր խղճալին առանձնանալու ինքզինքը սփո-

փելու համար . քանզի իւր մտին ներհակ յոյժ արտի ննշում մը կը գգար :

Մաքիլսին ու Քարօլինին փութազան խր-նամարկութիւնները , Պ . Պէրկմանին նար-սարութիւնը , եւ այս առաքինի ընտանեաց առ Աստուած ուղղած արեւանդն աղաչանք-ները չկրցին վերանորոգել Ֆարնէն տիկնոջ առողջութիւնը : Կը տեսնէր որ Մաքիլսին ե-րաժշտութեան ու ձայնին պատճառած բոլոր գուարեութիւններուն հակառակ իւր վրայ մնացած փոքր ինչ գորութիւնն օր քան զօր կը պակսի , ստիպեցաւ Մաքիլս դադրեցունել այս միջոցը , վասն զի զօրեղ ազդումն մը կը ներգործէր խղճալի մօրը վրայ : Այս վայր-կեանէն յետոյ տեսնութիւնն առ հասարակ ա-մենուն վրայ տիրած էր . եւ Քարօլին բոլոր-րովին վհասած հօրն ու քրոջն անհանգստու-թիւն կուտար :

Մաքիլս չէր համարձակէր Քարօլինին ցա-ւոյն պատճառն իւր հօրն իմացնել . վախճա-լով որ չըլլայ թէ անոր անհանգստութիւն մը պատճառէ :

Չախորդ դէպք մը վրայ հասնելով՝ վերջին հարուածը տուաւ Քարօլինին : Յարնէն տիկին տեսնելով որ իւր վախճանը կը մօտենայ, չուզէց Մաթիլտէն զաս ուրիշ մէկէ մը սպաս ընդունիլ : Երբ Քարօլին իրեն օժարակ մը կը մատուցանէր, կը վռնէր զինքը, եւ նշանացի ցոյց կուտար թէ, կուզէ որ մինակ Մաթիլտ մատուցանէ իրեն զայն :

Այս գործը սարօրինակ բան մը չէր հիւանդաց դեգուրեանը նայելով, որով շատ անգամ իրենց ամենէն սիրելիները կը վռնեն . եւ իւր մօրը սկարուքեանը մէջ անոր խտրութիւնը միայն կը տեսնէր ու կը նախանձէր :

Քրոջն օգնական ըլլալու համար գիշերը մօրը ղով անցունելէն յետոյ՝ երբ հիւանդը կը քնանար, զայն պատեն միջոց զտնալով կերթար կառանձնանար իւր սենեակը, որ այն տեղ միայնիկ մնջիկ իւր ցաւոցը թելադրած բոլոր ցնորանքներուն տեղի տայ :

Վերջապէս ձանձրանալով ասանկ սրտի տագնապ ու նեղութիւն կրելէն՝ ուզէց աղօթից օգնութեանը դիմել, բայց ժամանակն ան-

ցեր էր: Աղօթած ասենք կրյուսահատէր, գիր-  
քը ձեռքէն կիյնար, եւ ոգին անդադար սրբ-  
մութեան առարկային կը դիմէր:

Ֆարնէն սիկին լման ամիս մը մահուան  
սագնապը փաշելէն յետոյ՝ Տեսաւ իւր վերջին  
ժամուն մօտեցալը. ուրախութեամբ ողջու-  
նեց զայն. վասնզի իւր բոլոր վշակութիւն-  
ներուն վախճանն էր:

Գիշեր ասեն նուաղ ձայնով մը Մաթիլս  
կանչեց, որ ասեն որ Մաթիլս հոգնութենէն  
թուլցած ինկեր կը քնանար անկողինին վրայ:

Սիրելի Մաթիլսս, ըսաւ իրեն, ահա վեր-  
ջին ժամուս հասնիլը կիմանամ, կուզեմ քեզ  
վերջին անգամն ալ տեսնել:

Մաթիլս զնաց փնտռելու փոյրն ու հայրը.  
որոնք էրք հիւանդին անկողինին քով եկան,  
հիւանդը հորհորալով ելաւ նստաւ ու ըսաւ  
իրենց:

Իմ սիրելի բարեկամներս, ես ահա կը թո-  
ղում այս կեանքը, մահը իննի համար փա-  
փափելի է. վասնզի թշուառութիւններուս  
վախճանն է, եւ անոր գալը ուրախութեամբ

պիտի տեսնէի, թէ որ աշխարհիս վրայ չթողուի  
ինձ սիրելի անձիւններ: Բայց պէ՛տ է խոս-  
տովանիմ թէ իմ մահուանս պատճառն ես ինքս  
եմ. վասն զի միշտ մտածելով իմ գտնուած  
փառաւոր վիճակէս թուառագին վիճակի  
մէջ իյնալս, եւ ձեզի որ՝ իմ աղջիկներս,  
կը մտաբերէի հարուստ ժառանգութիւններ  
թողուլ, տեսնելով որ սխալուած էի ամուրի  
վիճակի մէջ թուառ կեանք անցունելու,  
ուր որ գրեթէ պարտաւորած եւս էի ամուս-  
նանալու այնպիսի մարդոց հետ՝ որոնք ձեզ  
երջանիկ պիտի չկրնան ընել, այս ամէնը  
մտածելով չկրցայ դիմանալ եւ տանել այս  
ծանրաթախիծ խորհուրդը:

Մտաբիւտ իւր երոջը չափ ինձ անհանգրս-  
տութիւն չպատճառեւ. ստացած տաղանդնե-  
րը կօզտեն իրեն աշխարհիս մէջ պատուաւոր  
վիճակ մը ձեռք բերելու: Ամէն տեղ պիտի  
փնտռեն զինքը ընտրողութիւն ունեցող մար-  
դիկ, իւր հանապազօրեայ աշխատասիրու-  
թեամբը սովորած ուսմունքները, եւ զինքը  
զարդարող գովելի յատկութիւնները նախա-



մեծար պիտի դասուին բարեխորհուրդ անձէ մը՝ որ անոր հետ պսակիլը իրեն երջանկութիւն պիտի համարի :

Բայց էվելոֆ ցաւս Քարօլինին համար է, եւ կը զղջամ այս վայրկենիս աւելի անդադար թախանձանքով շորդորելուս համար զինք իւր քոջն օրինակին հետեւելու : Կը ցաւիմ իւր ունայնասիրութեանը վրայ, գրէ թէ ես սիրս տուի իրեն զարդասիրութեան : Ինքը գեղեցիկ է, կը մտածէի թէ իւր գեղեցկութիւնն ու հարսութիւնը կարող են տալանդներուն տեղը բռնել, զորոնք որ իւր քոյրը կը ջանար ձեռք բերելու : Այսօր կիմանամ իմ յանցանքիս բոլոր մեծութիւնը . բայց չարիքն անդամանելի է, եւ այս խեղճ տղան պիտի պարտաւորի նուազ ու ցածուն կեանք մը անցունելու : Իրեն կը հրամայեմ որ զինքն Աստուծոյ կամացը յանձնէ . գիտնայ զոնք ըլլալ ինչ վիճակ որ Աստուած իրեն խրկելու ըլլայ . եւ թէ որ մարդիկ զինքը քողուն, երթայ Աստուծոյ գորովալիր գիրկն իլնայ : Եւ դու իմ հին բարեկամս, ըսաւ իւր

Էրկանը ձեռքը բռնելով, վերջին տարիներուն վիճես լմբնուցի. գորոնք որ անցուցինք այս առանձնութեան մէջ : Իմ տեսնութիւնս մեղմելու համար մեր ջանքերը ոչինչ էին, եւ դու իմ արտիս մէջ կարդացիր վճիս պատհար. ներէ իմ տարութեանս, որուն առաջին գոհը կը տեսնես որ ես եմ : Ներեցէք ինձի ձեր բոլոր արցունքներն որ քափել կուտամ ձեզի :

Եկէք բարեկամներս, եկէք վերջին անգամն ալ ձեր բարեկամը համբուրեցէք, գոր Տէրը քանի մը վայրկեանէն ետքը իւր գիրկը պիտի ընդունի :

Ֆարնէն տիկին իւր շքունքները պատկապցին շքունքներուն կայացուց, եւ չկարողացաւ անոր վերջին մնամ բարովը ըսելու : Այս պատուելի ծերոյն սիրտը ելած ըլլալով չկրցաւ խօսք մը գրուցել, մինակ իւր հեծկըլտանքը արտին քարգման կըլլային :

Մարիլս ու Քարօլին կարգաւ իրենց մայրը համբուրեցին :

Ֆարնէն տիկին նշան ըրաւ Մարիլսին որ

իւր փոքր գայ: Իմ սիրելի զաւակս, ըսաւ ի-  
րեն, առ քու նուագարանդ, եւ լսել տուր  
ինձ ֆաղցրիկ ձայնիկդ վերջին անգամն ալ.  
Երգէ ինձի հոգեւոր սաղ մը՝ որ երկին-  
քին նամբան պիտի բանայ իմ հոգւոյս:

Մաքիլս որչափ որ սիրեն ելած ու ողբով  
էր, հնազանդեցաւ, գնաց բերաւ նուագա-  
րանը, նստաւ մօրն անկողինին քով, ու եր-  
գեց հետեւեալ սաղը:

Երբ ցաւ անգութ իմ առնօքեր՝  
Գայ իւր ժանեօքըն մահաբեր,  
Վառեալ զինու Սրբոյ Հոգւոյն՝  
Համբերեմ քեւ Ասուած իմ Տէր:

Երբ կը զսնամ ես զիս սրկար,  
Եւ հաւաստով յոյժ ապիկար,  
Հոգւոյս վարեմ ըզդասասան,  
Դասապարտեմ զիս կամակար:

Վիշտն է առնող մեզի մահուր՝  
Որ կը սրբէ հոգւոյ մըբուր.  
Նըմանագոյն անբիծ մանկան,  
Տայ մեզ լինել քո յանդիման:

Իսկ եւ մեր մարմին մեղասաւէր՝  
Անջատէ ի քէն զոգլիս մեր.  
Թող ի հող լուծցի այս աման  
Զի բնդ քեզ լինիմք միաբան :

Որում գիտեն ցաւոց տկալ  
Խիս բարի է քան մեծ խնդալ.  
Որ սրտնջայ սրկարուքեամբ,  
Զուրախանար անդ հանգստեամբ :

Անմահն էակբն Միածին  
Մեզի համար խաչ առ անձին,  
Անարգեցաւ անբաւելին.  
Զի երկնչիմք մեք ի վշտին :

Որով մտանեմք ժառանգութեան՝  
Հօր անեղիդ որդեգրութեան.  
Եւ երկհային անանց բարեաց՝  
Կը ժամանեմք հոգւով խայսած :

Երանութեան այն մեծ պրսակ՝  
Յաւիտենից կենաց պարծանք,  
Որուն բաղձամք մեք միաբան,  
Զայն չեմք գտներ անվիշտ անկազ :

Հապա մինակ մեծ անցներով,  
Եւ նեղութեանց հուրք փորձելով՝  
Փայլեալ իբրեւ զոսկի մաքուր՝  
Փառագարդիմք երկնից լուսով:

Այս սգալի երգը բոլոր այն սեղ ներկայ եղողներն ընկղմեց ի խոր սրտութեան, եւ երգէն ետքը վսեմ լուսքիւն մը տիրեց: Անասեն Մաթիւս մօտեցաւ մօրը, եւ տեսնելով որ հոգին աւանդեր է, սոսկալի աղաղակ մը փրցուց:

Պ. Պերկման ընտանեաց նիչն ու աղաղակը լսելով վազեց եկաւ, եւ ուրիշ բան մը չկրցաւ ընել, հապա մինակ սկսաւ անոնց հետ այս ազնիւ տիկնոջ մահը լալ:

Պ. Փարնէն մաբեր ինկեր էր. որ թէպէտ քանի մը օր առաջ գիտցած էր իւր ընկերոջը մեռնելու վիճակի մէջ ըլլալը. բայց այս վայրկեանը իրեն շատ սոսկալի ու ողբալի եկաւ: Խեղն Մաթիւս կուլար կողբար, բայց հանդարտութեամբ ու երկնաւոր մխիթարութեամբ. վասնզի անտի կենաց լաւագոյն յոյսն

ուներ: Իւր ցաւոյն մէջ երջանիկ էր. մտածելով որ իւր սիրելի մայրը կերթայ ընդունելու յերկինս իւր առաքինութիւններուն մըրցանակը:

Քարօլին բոլորովին վհասած իւր մօրը խօսքերը դէռ կը հնչէին իւր յականջը, իրեն կուգար թէ կը լսէր սպառնալից մարգարէութիւն մը: Իսկոյն խեղճ աղջկան վրայ տոչորիչ ջերմ մը տիրեց, բայց Պ. Պէրկմանին դարմաններովը շուտով բժշկուեցաւ:

Իւր բարի հոյրը՝ որ թէպէտ մօրն այնքան երկարաձիգ հիւանդութեանն ասէն կրած աշխատութիւններովը բոլորովին սկարացեր էր, չուզեց թողուլ իւր ֆրոջն անկողինը, անդադար խնամեց զանի: Քարօլինին վրայ ցընորանք մը եկաւ. եւ այս վիճակին մէջ կը յանդիմանէր իւր հայրը, զինքը չսիրելուն ու ամէն նախապատուութեան նշաններն իւր ֆրոջը ցոյց տալուն համար. զանգատեցաւ մօրմէն, ըսելով թէ Մարիլին իրենիցէն գերազանց կրթութիւն տալու հոգ տարաւ, որպէսզի իւր սիրելի նախապատիւ զաւակը

փառաւոր հանդիսացնէ, եւ զինքն միշտ ցածուն վիճակի մէջ թողու: Նաեւ իւր քոյրը, իւր բարեւէր քոյրը եւս անտես չեղաւ: Ասանկ ցնորեալ ժամանակը յայտնի ըրաւ թէ ինչ աստիճան կը նախանձէր իւր քոջը վրայ: Ան ասէն միայն ամենէն նանչցուեցաւ Քարօլինին սրտմուրթեան գաղտնիքը:

Այս ցնորման ետեւէն վրան սարօրինակ վիասուրթիւն մը եկաւ, որով չկրցաւ իւր բարի մօրը յուղարկաւորութեան հանդէսին ներկայ գտնուիլ:

Մաքիլս որ դեռ չէր թողուցեր իւր քոյրը, մեղմ վիճակի մէջ տեսնելով յանձնեց զանի աղախինի մը խնամասարութեանը, եւ ինքը փութացաւ իւր մօրը յուղարկաւորութեան պատրաստութիւնները տեսնելու:

Ննջեցելոյն սան դրանն առջին Մէրլանինէնի հովտին բնակիչներուն մեծ մասը ժողվուած էին. վասն զի Փարնէն տիկին առ հասարակ ամենուն սիրելի եղած էր: Չկար գեղացի աղփասներէն մէկը՝ որ անկէ օգնու-

Ամբարդ զի ինչեկարգօք Ամբարձ Գրմուտե Կո

քիւն մը գսած, կամ օգտակար խրատ մը առած չըլլար :

Եկաւ տեսուչ ֆահանայն, եւ հոն ներկայ գտնուող բոլոր բազմութիւնը ֆահանային հետ յուղարկաւորութեան գացին: Երբ հասան հոն՝ ուր որ գերեզմանը պատրաստուեր էր, սկսան արցունք քափել: Ամէն մէկուն կը բուէր թէ մտնուցենաւորապէս բարեկամէ մը մայրէ մը կը զատուէին: Քահանայն դրժուարութիւն կրեց անոնց ցաւը մեղմելու մասին :

Մարմինը իջաւ գերեզման. եւ ֆահանայն ափ մը հող նետեց մէջը, եւ հետեւեալ խօսֆերն արտասանեց, որ խորին սպաւորութիւն մը բրին ունկնդրաց վրայ :

« Իմ հոյս, հողը թերեւ թող գայ քեզի . վասն զի դու շատ բաներ ֆաշեցիր աշխարհիս մէջ, եւ քու առաքինութիւնդ անոնցմով երբէք չսասանեցաւ: Տեսար դու քու բոլոր երջանկութեան յոյսերուդ անհետանալը. քու բարեբաղդ վիջակդ կորուսիր. եւ ինչպէս որ տեսնուերք հովէն թօթափելով կը ցուրին ,



այնպէս քու ինչքերդ ցիր ու ցան եղան . բայց դու քու վստահութիւնդ Աստուծոյ վրայեն չը վերցուցիր : Երանի քեզի որ քու հաւաստիդ երբէք նուազութիւն չբերիր, քէպէտ եւ խիստ փորձանքներու տակ ինկար : Չտարակուսեցար, եւ պիտի վարձատրիս . վասնզի Աստուած էր ան չարիքները քեզի խրկողը, քու հաւաստի փորձելու համար, եւ քեզի արժանի ընելու համար երկնից մէջ ընդունելու քու համբերութեանդ վարձք :

« Արդ եղբայրներ, նմանինք մեր այս քոյրին, որմէ այսօր մահը զմեզ կը զատէ . ինքզինքնիս սաստիկ սիրով չկապենք աշխարհիս ինչքերուն հետ . վասնզի կամայ ակամայ հարկ պիտի ըլլայ մեզի օր մը զանոնք բողոյլ : Հապա ջանանք մենք զմեզ ջերմեռանդ սիրով Աստուծոյ հետ կապելու, վասնզի ան է մինակ անկորուստ ինչք : Հարստութիւնը շատ անգամ արգելք մըն է մեզ արեւնիս առ Աստուած բարձրացունելու . սնափառութեամբ ինքզինքնիս կը փառաւորեմք . հպարտութեամբ մեր զօրութիւնները բան մը կը կար-

ծենք, եւ անոնց վրայ կը մեծամտինք. եւ երբ որ թուառութիւն մը գայ հասնի վրանիս, կը լփանիմք, բաւական զօրութիւն չենք ունենար զանոնք համբերութեամբ կրելու: Սորվեցունենք մենք զմեզ, եղբայրներ, ժուժկալութեան եւ սակաւապետութեան. երկինքն է իմաստուն մարդուն նշմարիտ վայելքը, հոն կը բնակի երջանկութիւնը: Աստուած ըլլայ մեր միակ ինչքը երկրիս վրայ. վասն զի մեր բուն հայրենիքն երկինքն է. եւ երկրիս վրայ մեր կեանքն ուրիշ բան չէ, բայց երէ կարնասել համբորդութիւն մը »:

Պասուելի Հովիւր լուեց, եւ բազմութիւնը սուրբ մտախոհութեամբ մը մեկնեցաւ անկէ: Արգոյ ֆահանային խօսքերն ամէն մէկուն վրայ փրկառիթ սպաւորութիւն մը քրած էին:

Երբ Պ. Ֆարնէն, Մաթիլտ եւ Պ. Պերկման տուն վերադարձան, Քարօլին խելափոք զգասացեր էր: Թէպէտ իրմէ պահած էին իւր ֆրոջն ու հօրը բացակայութեան պատճառը, բայց նա դժուարութիւն չունեցաւ իմանալու: Եւ գտան զինքն ի լաց:

Իւր փոյր ձեռքէն բռնեց եւ կուզէր գինքը մխիթարել . բայց այս գորովալիւ սիրոյ գործը ամենեւին չշարժեց Քարօլինին սիրքը : Տկար միտնովը կը կարծէր թէ իւր փոյրն արգելք եղած էր իրեն իւր ծնողաց սէրը վայելելու , եւ անտարբեր կերպով ընդունեց անոր գգուանքները , որով գորովագուլթ Մաթիլսին սիրքն էվելօք վշտացաւ :

Քարօլինին իրեն դէմ ըրած անիրաւութիւնները գինքը ետ չձգեցին զանի խնամելէն . բոլոր հիւանդութեանն ասէն անոր բարձին փոյլ անցուց գիշերները՝ մինչեւ իւր վերջին նիգը խնամելով ու յանձանձելով զանի :

Երբ փոջն առողջութեան նշաններն սկըսաւ տեսնել , կուզար փոյլը կը նստէր , սիրաշարժ գիրքեր կը կարդար , եւ անոր վրալ տիրած տրտմութիւնը փարատելու հնարքներ կը փնտռէր . երբ փունէն կարթննար , երբեմն կը մատուցանէր իրեն պարտէզէն ժողոված գեղեցիկ ու բարեհամ պտուղներ , երբեմն զարդի վերաբերեալ մանր մուրն նիւթեր , եւ տուաւ ասղնեգործ մը , եւ ուրիշ ինչ բան

որ գիտէր թէ խեղճ Քարօլինին զարդասիրութեանն ու բնաւորութեանը հանոյ է, անխնայ կընուիրէր: Երբ կըցաւ ոսփի վրայ ելլել ֆալել, ամէն պտտելուն հետը կընկերանար, եւ գորովայիւ խնամով մը կը պաշտպանէր անոր դողդոջուն ֆայլերը: Երբ հիւանդը դալարագեղ գետնի վրայ կը հանգչէր, Մաթիլս կերբար ծաղիկներ կը փնտռէր ու կը բերէր իրեն կը մասուցանէր, որոնցմով մազերը կը զարդարէր: Վերջապէս ամէն ֆողք ու փութաջան խնամքները կառասածեռնէր իրեն: Եւ Քարօլին առողջանալով տեսաւ իւր Մաթիլսին դէմ ունեցած ծուռ կարծիքներուն անհետանալը:

Օր մը ըսաւ իւր ֆրոջը, սիրելի Մաթիլս, կը փափաքիմ քեզի հետ մէկտեղ այցելութեան երբալ մեր մօրը գերեզմանին, անշուտ ասի տեսնալի պարտաւորութիւն մըն է, բայց հարկ է ինձ կասարել:

Մաթիլս վախնալով որ չըլլայ թէ այս սրգալի այցելութիւնը սաստիկ տաւորութիւն մը բնէ իւր ֆրոջը վրայ, եւ անոր առողջու-

քեանը վնաս բերէ, հնարքներ փնտռեց անոր միտքը փոխելու, բայց Քարօլին անանկ կերպով մը դէմ կեցաւ որ, հարկ եղաւ Մաքիլսին անոր կամքին զիջանիլ :

Այս ազնիւ փոյրն որ Քարօլինը ծանրապէս չսքսեցունելու համար դեռ սգոյ հանդերձ չէր հազած . այս անգամ երկուքը միասեղ սուգի հանդերձներ հազան :

Երկու փոյր ելան գացին : Պ. Ֆարնէն հեռուէն անոնց ետէն կերթար : Երբ գերեզմանասուն հասաւ, ուղղեցան դէպ ի ամայի սեղ մը՝ որն որ սգազգեաց ուռենիները կը հովանաւորէին . այս անտառիկին մէջ կը բարձրանար ծաղկալից դալարագեղ բլրակ մը ուր որ սնկուած էր անպանոյն խաչ մը, որ այն սեղ գերեզմանասուն ըլլալուն նշանն էր : Մաքիլս ծունկի վրայ եկաւ Քարօլինին ֆով, եւ երկու փոյր յորդառաս արցունքներ քափելով երկար աղաչանք մը մասուցին իրենց մօրը հոգւոյն հանգստանը համար :

Երբ աղօթքնին լմրնցուցին, Քարօլին բրոնեց Մաքիլսին ձեռքէն, եւ տարաւ նստա-

րանի մը վրայ՝ որն որ հայրերնին տեղաւո-  
րեր էր իրենց մօտը գերեզմանին քով, եւ  
նստան անոր վրայ: Խեղճ տղոյն սիրտն էլած  
էր, ողբալով բռնեց իւր քոջը ձեռքէն,  
արտին վրայ տարաւ սեղմեց, եւ քանի մը  
վայրկեան առանց խօսք մը արտասանելու  
այնպէս կեցաւ. եւ արտին շարժումը քիչ մը  
հանդարտելով Մաթիլտին վիզն ինկաւ, եւ  
ջերմեռանդ սիրով փարելով ըսաւ. ներէ ին-  
ծի, ներէ իմ սիրելի Մաթիլտս իմ ծուռ կար-  
ծիքներս՝ որ քեզի դէմ կը սնուցանէի: Հի-  
մա յամօք ինձ կը խոստովանիմ զայն, նա-  
խանձը արտի սիրած էր, չէի կրնար առանց  
նախանձելու տեսնել քու ձիրքերդ, որոնք  
քու հանապազօրեայ աշխատութեանդ պը-  
տուղներն էին: Անիրաւաբար կը գանգատէի  
իմ ծնողներէս, եւ ես զիս կը զսնայի սգի-  
տութեան բեռին տակ ննջուած: Ներէ ինծի  
թէ որ տարակուսեցայ քու սիրոյդ վրայ. բայց  
հիւանդութեանս ասեմ քու ըրած անխնայ  
վեհանձնական խնամարկութիւններդ զիս  
համոզեցին ու հաստատեցին քու սիրոյդ վրայ:

Ի միտ առի իմ բոլոր անիրաւութիւններս . եւ արդ կաղաչեմ քեզի մոռնալ իմ քեզի դէմ գործած յանցանքներս : Ահա հոս մեր բարի մօտը գերեզմանին վրայ , Ասուծոյ առջին որ կը լսէ մեզ ամէն տեղ , կերդնում բոլոր նախանձութիւնները մէկդի թողուլ . քեզի կրնձայեմ իմ բովանդակ բարեկամութիւնս ու սէրս , եւ այսուհետեւ պիտի ջանամ քու փաղցրութեանդ ու հաստատութեանդ նմանելու :

Մարիլս ջերմագին արցունքներ քափելով պլլուեցաւ իւր քոշը , եւ հաստատեց իրեն ըսելով թէ քու իմ վրաս ունեցած ծուռ կարծիքներդ երբէք իմ քու վրայ ունեցած բարեկամութիւնս ու սէրս չպատեցուցին :

Պ. Ֆարնէն ականատեսն էր այս սրտաւարձ տեսարանին , եւ ուրախութեամբ ու դողդրդալով վազելով փարեցաւ իւր աղջիկներուն :

Երեք մէկտեղ դարձան իրենց բնակարանը . եւ երջանիկ գտաւ Քարօլին իւր ասելութեան ու նախանձու կիրքերը յաղթելու համար քրտած վեհանձն ջանքովը . այս երդիքին

սակ վերստին երեւցաւ ուրախութիւնը , ուր  
որ երկար ժամանակէ ի վեր սրտմութիւնը  
սիրած էր : Այնուհետեւ չէ թէ մինակ չնա-  
խանձեցաւ Մաթիլտին ձիւրբերուն , հապա  
նաւել ինքն էր առաջինը՝ որ կը փափաքէր  
զայ անոր քով նստիլ , ու գեղեցիկ նուա-  
զածութիւնները մտիկ ընել :

Պ. Ֆարնէն շուտ մը թողուց Մէրլաննէն ,  
եւ եկաւ բնակեցաւ ի Պէրլին երկու աղջիկ-  
ներուն հետ մէկտեղ : Մաթիլտ չմտաւ ալ իւր  
նուագագործին քով , որ կարող ըլլայ իւր  
ծերունի հօրն ամէն պէտք եղած խնամքներն  
ընելու՝ որոնց որ իւր հասակը կը կարօտէր :

Քարօլին վերադարձաւ իւր կտակագործու-  
հիին տունը , եւ շուտ մը անանկ յաջողակ  
զտաւ որ այս կինը , որ հարկադրած էր ալ  
թողուլ իւր գործները , զինքը իւր տանը գը-  
լուխ կարգեց , եւ իւր մէկ հասիկ տաղան-  
դաւոր ու բարեբնոյթ զաւակին հարսնացուց :

Պ. Պերկման Մաթիլտին առաքինութեանցը  
վրայ սիրտն էվելօք կապուած ըլլալով պր-  
տակեցաւ անոր հետ . մտածելով թէ ասանկ



աղջկան մը հետ պսակիլն Աստուծոյ օրհնութիւնն իւր սանը վրայ բերել է, եւ մեծ երջանկութիւն է մտրդուս . ինքը թէպէտեւ չբաւոր է, բայց իւր առաքինութիւնները պատուականագոյն են քան զամենայն զանաւ աշխարհի :

Պ. Ֆարնէն իւր երկու աղջիկներուն սիրայորդոր նպաստիւքը տեսաւ զինքը երջանիկ վիճակի մէջ, եւ իւր կենաց վերջին տարիները խաղաղութեան ու հանգստութեան մէջ անցուց :





## ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊԱՀՍՊԱՆ

Ե Ի

Ի Ի Ր ԱՂԶԻԿԸ

Մեր Պիւլֆարսը կանանչագեղ դալարի մը վրայ նստելով կրսէր իւր Կոստանդին աղջրկանը . քիչ մը նստինք աղջիկս , վասնզի ոսկերս պալարներ բացուեցան , եւ ալ չեմ կրնար դիմանալ ֆախելու :

Կոստանդին նստաւ ֆովր ու սկսաւ լալ . ըսաւ իրեն ծերը դողդոջուն ձայնով մը , մի լար , գորացիւր , աչքերդ վեր վերցուր իմ հրեճակս , սես ինչպէս երկինքը պարզ է , մըրրիկն անցաւ : Միսավանառին հիւղը հանգրսանալուդ չափ երբէք այնչափ հանգրսացէր էիր , ֆու հօրդ տունը փրփրալից անկողինի մը վրայ . աւելի եւս խաղաղ կերպով պիտի հանգսանաս , երբ խոսու-

գին մրրիկն որ կը գոռայ յերկինս , դադրի :

Տես դու հայրիկս , ինձի համար չէ որ կուլամ :

Միտնդ բեր սիրելի զաւակս , որ մեր մէջը պէտք չէ դու բառը գործածել մեր բուն անունէն զաս :

Ճամարիտ է . տես սիրելի հայրս՝ ոտներնիս արիւն քաքաղ եղան , մուճակնիս ու արունկներնիս փառասեցան , բայց ես անհրճունջ կը համբերեմ . մինակ քեզի համար է որ կը վշտանամ . տեսնելով որ այդ ծերունի հասակիդ մէջ մուրացկան կը շրջիս , եւ այն ալ իմ պատճառաւս . ասոր վրայ սիրսս կը խոխոխայ :

Գէպ ի Արեւմուտք նայէ , Կոստանդին , տես ինչպէս գեղեցիկ կապուտագոյն է երկինք : Գիտէս ինչու համար կապուտ փոքրիկ գեղեցիկ ծաղիկները *միոզոթի* (myosotis) կը կոչեն , կը յիշես ինձի :

Վասն զի երկնագոյն են :

Կը տեսնես որ երկինքին կապոյտ գոյնը կը նշանակէ , *մի մոռնաք գիս* . եւ բնութեան յասկեղ դալարութիւնը կը նշանակէ , *չպիտի մոռնայ գիս* . վասնզի կանանչը յուսոյ գոյն է :

Շատ աղէկ, սիրելի հայրս, միտքս կը բերեմ ինչ որ հանգուցեալ մայրս կըսէր ինձ . երբ հրաբորբոք ջերմեռանդ սէր մը կը վերանայ յերկինս, անասեն երկինքէն քաղցր, շքունահաճիւր ու պայծառ օրհնութիւն մը կիջնայ, որով մարդուս սիրքը կը գուարթանայ, եւ ամենաքաղցր կեանք մը կը ստանայ :

Իրաւունք ունէր. բայց աս ուրախութիւնը վայելելու համար պէտք է որ առաջ որոտումն ու մտքիկը զինքն իմացունէ: Տես ինչպէս արեւն որ ամպերուն ետեւէն բոցանահանչ կը ցոլանայ, ջերմագին հառազայրներ կարձակէ մեր վրայ. եւ ինչպէս եօթներփեան ծիածանն անտառին բարձրէն մինչեւ կաղամախին վրայ կամարածեւ ծագած է: Կարծեմ թէ բարեբաղդ բան մը պիտի պատահի մեզ:

Ես ալ այդպէս կը կարծեմ. վասնզի մեր վշտագին ցաւերուն մէջ զԱստուած նեղացուելու բան մը չըրինք:

Չէ սիրելի զաւակս, դասապարտութեան արժանի գործ մը չգործեցինք. բայց արդ ժա-

մանակ է համբայ ելլալու, վասնզի դեռ  
չառ հեռուն պիտի երթանք, պատճառ մը հաց  
ունիս մախաղիդ մեջ :

Աստուած ողորմի մեզի, բաւ դեռաբու-  
սիկ աղջիկը հառաչելով : Այս խօսքերն ը-  
սած ասենը ջերմագին արցունքներ կրթափե-  
ին աչքերէն : Փնտեց գտաւ մախաղին մէջ  
հինաւուրց չորաբէկ հացի կեղեւ մը, եւ զայն  
հօրը տուաւ ու սկսաւ առջեւէն փախել :  
Ծերն աշխատութեամբ հացին կեղեւը կրծե-  
լով ետեւէն կերթար :

Յանկարծ հեռուէն երիտասարդ մը տեսան  
որ գեղեցիկ խորճագոյն ձիու մը վրայ նստած  
դէպ իրենց կուգար : Կոստանդին հեռուէն  
նանչնալով զայն՝ անտառին մէջ ծառերուն  
ետին պահուրսեցաւ, ու հօրը նշան ըրաւ,  
բայց նա չկրցաւ որոշել անոր նշանն եւ կը  
շարունակէր համբան : Ծերը կարհասեա ըլ-  
լալով չտեսաւ ձիաւորը, մինակ երբ որ մօտ  
եկաւ, ան ասեն անոր ով ըլլալը նանչնա-  
լով՝ մեղմ ձայնով ու երկիւղալի դէմ-  
քով մը ըրաւ : Աստուած տար որ նանչ-

նար զիս այս ծայտալ կերպարանովս :

Չիաւորն ամենեւին միտ չդրաւ այս աղ-  
փաս նանապարհորդին, եւ առանց նկատե-  
լու զանի փոլէն անցաւ զնաց : Անասեն Կոս-  
տանդին ելաւ անսառէն, բռնեց հօրք քեւէն  
ու անսառէն դուրս հանեց :

Գիշերք մօտեցաւ, եւ աղփաս նանապար-  
հորդները հանգչելու տեղ մը չունէին : Ան  
ասեն ծերն սկսաւ մտածել քէ մարդասիրու-  
թեան աղագաւ զինքը թշուառութիւններու  
ու աղէտներու մասնածէր, եւ կամաց կամաց  
շարունակեց նամբան անսառին մէջտեղէն :

Այն տեղէն քիչ մը հեռուն անսառին վեր-  
ջին ծայրը զանգակ մը տեսաւ Կոստանդին .  
եւ ուրախանալով ըսաւ հօրք, սիրելի հայրս,  
ահա եկեղեցի մը, մեր ֆայլերը դէպ ի հոն  
ուղղենք :

Աղէկ զաւակս, ըսաւ ծերը, բայց պէտք էր  
որ արդէն հոն գացած ըլլայինք, եւ աղջիկն  
օգնեց անոր անսառին քիչ մը դիւրին նամ-  
բան հանելու . այս նամբան ուղղակի գեղը  
կը հանէր: Երբ հոն հասան, իմացան որ բո-

լոր գաւառին մէջ Գաղղիացի զինուոր մը չը  
կայ . ասի մեծ ուրախութիւն պատճառեց ի-  
րենց : Խումբերը Ռէն գետին մօտեցեր էին :

Այս նոր լուրն եւս ուրախութեամբ լեցուց  
զիրենի , եւ ապահով կերպով բնակեցան  
գեղը :

Այս գեղը դիւրակեաց եւ հեշտին կեանք  
անցունելու տեղ մըն էր : Տուները մեծամեծ ու  
գեղեցկաւէն էին . մարդիկ իրենց սանր դրան  
առջին նսած գերեկուան աշխատութիւն-  
ներնուն հոգնութիւնը կառնէին . նորածա-  
ղիկ մանչ ու աղջիկ տղայք անունց մէջ կը խա-  
ղային , եւ կանայք իրենց կովերը կը դար-  
մանէին , կամ զանոնք կրելու զբաղած էին :

Ճանապարհորդները բարեւեցին զգեղացի-  
ները , որոնք սիրով իրենց փոխադարձ ող-  
ջոյնն անունց մատուցին :

Սիրտ առ աղջիկս , ըսաւ ծերը , կը բուխ  
թէ բարեպաշտ մարդոց մէջ եմք , որոնք ան-  
շուշտ յօժարութեամբ պիտի մտիկ ընեն տաղ  
մը : Անասեն Կոստանդին զնաց կայնեցաւ  
մեծաւէն տան մը առջին , եւ սկսաւ ներդաւ-

նակաւոր ֆաղցրիկ ձայնով սաղ երգել : Իւր Պիւլֆարս հայրը մեղմ ու անոյշ ձայնով մը ձայնակից կրլլար իրեն : Երբէք գեղացիք աւսանկ ֆաղցր ձայն մը լսած չէին . որոնք խկոյն երգիչներուն չորս դին բոլորեցան : Մերունի մը եկաւ խառնուեցաւ ունկնդրաց բազմութեանը մէջ , սարիքն իւր մարմինը կորացուցեր էր , իւր հոգեւոր աշխատութիւնները մազերն սպիտակացուցեր էին , եւ ընդ երկար կրօնական կրթութիւններն որոնց որ ինքը մեկնիչն էր , իւր դէմքին վրայ ֆաղցր ու բարեւէր կերպարանք մը տպաւորէր էին , որով իրեն կը յանկուցանէր բոլոր սիրտերը : Ասի Պիւլֆարսին նման հինաւուրց հաստատակիտ անձ մըն էր . պարզ ու մաքուր վարքը եւ եռանդուն կրօնական նախանձախնդրութիւնն այս երկու մարդոց յատուկ բնաւորութիւնն էր : Այսպէս շուտով հասկըցուեցան : Բարեկրօն ժողովրդապէտք մտադրութեամբ մտիկ ըրաւ այս սաղը , եւ իւր արեւանուններն ողողեցան արցունքներով :  
Տաղը լմննալեն յետոյ ըսաւ գեղացիներուն .



հրամներէք գաւազներս , Ասուծոյ վրայ վրասահուրիւն ունենալն է որ մեզ կը պահէ չարիքներէ , եւ կառաջնորդէ փրկութեան հասապարհին մէջ :

Գեղացիներն առասօրէն վարձասրեցին երգիչները : Եւ ամէն կողմէն կը հարցունէին իրենց . ո՞վ էք դուք , ո՞րկէ կուգաք :

Պասասխանեց Պիւլֆարս . Ես եմ Ֆրէշապուրկ (բռնաւորութեան ամբողջն) կոմսութեան մէջ Էօնկլիւկսօսան (խղճութեան գեղէն) :

Էօնկլիւկսօսան , ըսին գեղացիք , չենք հանչնար այս գաւառը , երբէք լսած չունինք այս գեղին վրայօք :

Ժողովրդապէսը կերպով մը գլուխը շարժելով կը ցուցունէր քէ ինքը հասկցեր էր . եւ ըսաւ Էօնկլիւկսօսան մեծ գեղ մըն է , ուր շատ բնակիչ կայ : Անասեն ձերոյն ձեռքէն բռնելով աղջկանը հետ մէկտեղ տարաւ իւր խաղաղիկ բնակարանը :

Այս օտարական աղֆասներուն երգը շատ հանելի եղած էր գեղացիներուն , եւ գեղին

վերակացուն խօսակցեցաւ գեղին ազնուականներուն հետ հասկնալու համար թէ կուզեն որ ծերր գիշերային պահապանութեան պատճօնը վարէ : Առաջարկութիւնն ընդունուեցաւ , եւ որոշեցին որ հարցունեն Պիւլֆարսին թէ կուզէ գիշերային պահապան ըլլալ : Այս որոշման մէջ չմտածուեցաւ իւր ծերունի հասակը , եւ չհարցուցին իրեն թէ բաւական կարողութիւն ունի այս պատճօնին աշխատութիւնները սանելու , եւ թէ կրնայ գող մը բռնել կամ հալածել : Ասոնց եւ ոչ մէկուն վրայ հարցմունք մը եղաւ , հապա մինակ աղէկ կերգէր , եւ այս հերիք էր :

Վերակացուն քիչ մը ետքը գնաց ժողովրդապետին տունը , եւ անոր հաղորդեց իւր խորհուրդը : Սա եւս գոհ ըլլալով անկէ՛ շուտ մը գնաց Պիւլֆարսին այս պատճօնին առաջարկութիւնն ընելու : Բարի ծեր , ըսաւ իրեն , մեր գիշերային պահապանը քահի մը օր կայ որ մեռաւ , կուզես անոր տեղը բռնել :

Պիւլֆարս վշտալից զգածմամբ աչքերն երկինք վերցունելով աղաղակեց . նով Տէր , լեզ-

մով պիտի կարող ըլլամ այս պաշտօնը վա-  
րելու :

Վերակացուն զարմացեալ դէմքով մը զին-  
քը դիտեց, եւ ըսաւ իրեն. ինչպես պէ՛տ է  
իմանալ ինչ խօսեցրդ :

Պիւլֆարս պատասխան տուաւ իրեն. կրն-  
դունիմ այս պաշտօնն երախտագէտ արհիւ,  
լաւագոյն կերպով պիտի կատարեմ ինծի յանձ-  
նուած պաշտօնին պարտաւորութիւնները :

Շատ ուրախ եմ աստ, ըսաւ վերակացուն,  
հիմա կերթամ կը խրկեմ Ֆեդի ցուպն ու  
եղջերափողը : Յուցակին կարգովը պիտի  
կերակրիս բնակիչներէն : Վաղը պիտի հա-  
շտա իմ տունս : Այս գիշեր հանգստացիր, եւ  
վաղը պիտի սկսիս պաշտօնդ : Գեղին մէջ  
փոքրիկ բնակարան մը պիտի ունենաս : Քու  
աղջիկդ Ֆեզ կը խնամէ, եւ պիտի կրնայ  
հանի մը ստակ վասկիլ ասեղի աշխատ-  
քիւններով. վասնզի ծանր գործերու յարմար  
չերեւար : Դեռ չեմ հարցուցած հասարակու-  
թեան. բայց երբ որ արգոյ ժողովրդապետը  
կամ ես բան մը կուզենք ընել, կրնանք գոր-

ծաղրել առանց վախճալու ժողովուրդին  
սրտունջէն: Ասոյգ չէ, իմ ձերունի բարեկամս,  
ըսաւ մեծարգոյ Քահանային ձեռքը սեղմելով:

Պատասխան տուաւ ժողովրդապետը, օրհ-  
նեալ է Ասուած, որ հասարակութիւնը մեր  
վրայ վստահութիւն ունի, եւ ամենեւին անոր  
վրայ զղջալու սեղ չեն ունեցած:

Օտարական ձերն ու իւր աղջիկը կը յամե-  
նար ժողովրդապետին տունն որ հեռանայ վե-  
րակացուն, եւ խորին ու իսուր խորհրդով  
զգացած կերեւային, որն որ կը ցուցունէր  
քէ ի հարկէ անհասկանալի դժուարին պա-  
րագայի մը մէջ են, եւ որուն լուծումը չնաօ-  
խարհիկ բան մը կը խոստանար իրեն:

Երբ վերակացուն գնաց, Քահանան բռն-  
նեց ձերոյն ձեռքէն, ու ըսաւ իրեն. բարի  
եկիր, այս գիշեր իմ երդիքիս սակ պիտի ան-  
ցունէի: Ասուած հրամայեց մեզի հիւրասի-  
րութիւնը, եւ պիտի չմոռնամ երբէի Տէրոջը  
հրամանները:

Սիրելի արգոյ ժողովրդապետս, ըսաւ Պիւլ-  
ֆարս, սոյոգ է որ, մենք մեծի օգնութեան

կարօտութիւն ունինք . եւ այն որ կը հնա-  
զանդի Աստուծոյ կամացը, հանդերձեալ  
կեանքին մէջ Բարձրելոյն աջ կողմը դասե-  
լու տեղ կը վասկի : Զմիւռնիոյ Նախկո-  
պոսին պատահած դէպքը մարդ կրնայ ղեզի  
յարմարցունել . կը նանչնամ ինչ աղբասու-  
քիւնդ , բայց դու հարուս ես , վասնզի եր-  
կինք ղեզի համար բաց են :

Ժողովրդապետը կատարեալ սիրով պլլուե-  
ցաւ ծերին , ու ըսաւ իրեն . ճի որպէս թէ  
Ղովք նահապետին նման հրեշտակներ ընդու-  
նեցի տունս :

Կոստանդին հառաչելով պատասխան տուաւ  
իրեն . հրամարեմ , ունեցար ինչ տունդ հրեշ-  
տակներ . վասնզի մենք մեզէն նանչցանք  
ինչ հիւրասիրութիւնդ :

Ժողովրդապետը ընդերկար շուտեցաւ .  
իրեն կը թուէր թէ այս աղբաս օտարականնե-  
րը այլակերպեալ մէկունք են : Երկչոտ դէմքով  
մը ըսաւ ծերին , կրնամ համարձակիլ հարցնել  
ղեզի ինչ գաղտնիք . վասնզի ամէն ձեր վրայ  
տեսածներս կը ծանուցանեն թէ ցածուն վի-

նակի մէջ ծնած չէ՛ք դուք, ուր որ կը տեսնեմ  
ձեզ խոնարհած :

Փայտեցաւ Պիւլֆարս : Թէ՛ որ քսաւ ուզեմ  
ես զիս յայտնել, առաջինը դու պիտի ըլլաս՝  
որուն վրայ որ կը հաւատամ կարող ըլլալ  
դնելու իմ վստահութիւնս, եւ անոր վրայ չը  
պիտի զոյջամ :

Լուեց ծերը, եւ ժողովրդապետն ալ աւելի  
հարց ու փորձ չքրաւ : Սեղան նստան, ու  
չափաւոր ընթրիք մը նաշեցին :

Ժողովրդապետին տոյրն որ շատնցուրնէ ի  
վեր անոր հետ կը բնակէր, ծանր հիւանդու-  
քիւն մը գինեք յանկողին ձգած էր, ներմա-  
կեղէն ու հանդերձներ ընծայ տուաւ Կոս-  
տանդինին : Ժողովրդապետն ալ նմին նման  
վարուեցաւ հօրք հետ, բայց չկրցաւ շատ բան  
մը տալ անոր . վասնզի իւր մարդասիրու-  
քիւնն այն աստիճան մեծ էր որ ժողովրդեան  
ամէն աղփասներուն վրայ կը տարածէր . քէ-  
պէտ ինքը խոր ծերութեան հասած էր, բայց  
եւ այնպէս գինեք շատ անգամ կը զրկէր  
իւր խորին ծերութեանը մէջ կարեւոր բա-

ներէ՛ կարօտեալներուն օգնելու համար :

Հետեւեալ օրը մտաւ Պիւլֆարս իւր պատ-  
սօնին : Կոստանդին սկսաւ իւր սպասահար-  
կուքիւնները կատարել գիշերային պահա-  
պանին աղֆասիկ բնակարանին մէջ . եւ երե-  
կոյին երբ հայրն իւր առաջին տղագայու-  
քիւնը կատարեց , անոր հետ ընկերանալով ի  
միասին երգեց ֆաղցրանուագ տաղ մը : Գե-  
ղին խաղաղակեաց բնակիչները մեծապէս  
գոհ եղան իրենց գիշերային նոր պահապա-  
նէն , եւ կուտային իրեն ինչ որ կրնար իւր  
վիճակը դիւրասար ընելու նպաստամատոյց  
ըլլալ :

Հայր Պիւլֆարս շուտով բարեկամութիւն  
կապեց գեղացիներուն հետ , եւ գեղին մէջ  
բան մը չէր ի գործ դրուէր առանց իրեն  
հարցունելու :

Կոստանդին ծաղկահասակ դեռաբոյս աղ-  
ջրկանց զինքը մաքրակենցաղ ու համեստ վա-  
րուց կենդանի օրինակ կրնծայէր , որով ա-  
մէնք կը ջանային անոր նմանելու : Հայրն ու  
աղջիկներկուքը մէկտեղ գաւառին բնակիչներ-

րուն համար գրեթէ նւարիս պահապան հրեւեակներ էին :

Իրենց գալէն երեք ամիս անցնելով հասան մինչեւ Սեպտեմբեր ամսոյն: Պիւլֆարս ու իւր աղջիկը գոհ արհիւ կապրէին, եւ զիրենք Աստուծոյ կամացը յանձնած կը սպասէին որ Ինքը բարեհաճի իրենց վիճակը նորոգելու :

Սեպտեմբեր ամսոյն երեկոյեան ժամը մէկին երբոր սկսան իրենց առաջին շրջագայութիւնն ընել գեղին մէջ, Կոստանդին դիտեց Տեսաւ որ մարդ մը իրենց կը հետեւէր, եւ երգած սողերնուն ախանջ կը արէր: Երբ երգելու կը կանգնէին, ան ալ կը կանգնէր. երբ նամբայ կելլային, նա ալ իւր նամբան կը շարունակէր: Ասանկով մինչեւ գերեզմանասուն ետևնուն եկաւ. երբ հոն հասան, յանկարծ աներեւոյթ եղաւ աս մարդը աչքին առջեւէն:

Կոստանդին հօրը բան մը չըսաւ ասոր վրայօք. վախճալով որ չըլլայ թէ զինքն անհունգիս ընէ. բայց իւր սիրտը հանգիս չէր: Վերջը հանդարտեցուց զինքը, համարելով



զանի իբր նանապարհորդ մը՝ որ կանցնէր գիշերը գեղէն, եւ կը հետեւէր իրենց երգած սաղերնին մտիկ ընելու համար. եւ զինքն Աստուծոյ կամացը յանձնելով սկսաւ սաղ մը երգել, որուն սկիզբն էր. «Ինչ որ կրնէ Աստուած բարի է»:

Երբ գեղին վերի քաղը հանող նամբայ մը Երջապատող երկու ցանկերու մէջսեղ հասան, յանկարծ երեք հոգի ցանկին վրայէն ցաթկեցին: Երկուքն առջեւնին անցան, միւսն ետեւնին: Երկուքն մէկն սկսաւ պօռալ. ձայն չհանէք, եթէ ոչ կը սպաննուիք:

Անոնք մէկ բերան պօռացին, Տէր ողորմէ մեզի: Աստուած լսեց անոնց ձայնը, ու առաջանման ընդունեց: Ան միջոցին երկու գեղացի որ գեղը կը մտնային, ասոնց պօռալուն ձայնը լսելով վազեցին հոն, եւ անոնց վրայ յարձակող երեք մարդոցմէն երկուքին վիզէն բռնեցին. եւ օգնութիւն կը խնդրէին:

Կոստանդին հովի նման արագութեամբ վազեց գեղը գեղացիներն օգնութեան կան-

չելու: Մարդ մը վազեց հոն՝ որ ներմակ վերարկու մըն էր հագած: Երբ երբորդ յարձակողն անոր մօտեցաւր սեսաւ, դանակը ֆաշեց իջիւր անիծեալ Լօրանհէն ի դժոխս պօռալով խօթեց Պիւլֆարսին մարմնոյն: Այս սոսկալի բարբարոսութեան գործը կասարելէն յետոյ փախչելու երես բռնեց:

Լօրանհէն, պօռաց սպիտակ վերարկու հագնող մարդը յուսահասական ձայնով մը, Լօրանհէն իմ հնչրս: Աս խօսքերը գրուցելով շուարած ինկաւ ծերոյն ոտքերը: Գեղացիք իրենց այլայլութեանը մէջ երկու չարագործներուն փախչելու միջոց տուին:

Վերջը Կոստանդին օգնական մարդիկներովը հասաւ, բայց բանը բանէն անցեր էր: Զարհուրեցաւ սասանեցաւ իւր հոգին, երբ սեսաւ որ հայրն օտարականի մը ֆով գետնի վրայ փռուեր ինկեր էր: Կոստանդին կարծեց թէ այս օտարականն էր իւր հայրն սպանողը: Գեղացիք փութացեր էին անոր օգնութեան հասնելու. որոնցմէ ոմանք կը ջանային երիտասարդին խելքը գլուխը բերել,

Եւ ոմանք արիւնն արգիլել, ինք վստիօրէն կը հոսէր ծերոյն վերէն:

Երիտասարդը գլուխը վերցուց, եւ նետուեցաւ հոգեվարժին ծունկերուն, ինչպէս հայրս, իմ հայրս, բոլոր օրհնութիւնդ, եւ բոլոր որդիդ եմ աղաղակելով:

Շարլէ՛զ, կարելիք բան է, պօռաց Կոստանդին, դո՞ւ եւ իմ եղբայրս, ուրեմն դարձեալ իբար կը տեսնենք կոր. այսպէս ըսելով նետուեցաւ անձանօթին հիշք, եւ գորովալիք սիրով փարեցաւ անոր: Ետք աչքերն երկինք վերցունելով աղաղակեց. Տէր դու՛ որոյ կարողութիւնդ անբաւ է, տես մեր ցար, եւ ողորմէ մեր արցունքներուն, շնորհէ մեզի մեր հայրը, որք մի թողուր մեզ երկրիս վրայ:

Բոլոր գեղացիք այս ձախող լուրը լսելով վազեր եկեր էին սպանութեան տեղը: Իմաստուն ժողովրդապետք հասեր էր հոն տառապեալներուն անխնայ կրօնական օգնութիւններ մատուցանելու համար:

Վիրաւորեալը տարուեցաւ ժողովրդապետին տունը, ինչպէս որ կ'ամեցեր էր այս ար-

ժանապատիւ ծերը : Երկու որդիք հոգեվարժին  
գլուխը կը պաշտպանէին : Ոմանք փութացին  
երթալ փնտելու վիրաբոյժը, որուն դար-  
մանները ծերին խելքը գլուխը բերին : Իւր ա-  
ռաջին նայուածքը Կոստանդինին վրայ ձգեց :

Աղջիկս, պօռաց, օրհնեալ է Աստուած,  
դու ազատեցար իմ կողոպտիչիս ձեռքէն :

Կոստանդին պատասխան տուաւ թնոր. ճի՛  
իմ սիրելի հայրս, բու կենացդ գնովը գը-  
նուած իմ ազատութիւնս բոլորովին անպի-  
տան կըլլար ինձ. զայս ըսելով հօրը բովը  
ծունկ չոգեց, ձեռքը պագաւ, եւ շարու-  
նակեց. ես աղաչեցի զԱստուած որ բարեհա-  
նի բու կեանքդ փրկելու, եւ դու ինձ սով-  
րեցուցիր չխնդրել Աստուծմէ ինչ բանի վը-  
րայ որ ապահով չէի ըլլար թէ կըլսէ : Չէ,  
չպիտի մեռնիս դու. ապրէ, քեզի դեռ քաղցր  
ու մահուր ուրախութիւններ պահուած են :

Վիրաբոյժը վիրաչափ գործին խօթելով  
վէրժին մէջ՝ յայտնեց թէ վէրքը մահառիթ  
չէ, բայց հիւանդին վիճակը հանդարտու-  
թիւն կը պահանջէ :

Շարլէզ արահիւն մէկ խորշը ծուկկի վրայ  
եկած լռիկ մնջիկ կաղօթէր. կը ցանկար  
գալ ծերոյն ծուկկերն իյնալ, բայց կը վախ-  
նար որ իւր անակնկալ վերադարձը՝ զոր կոր-  
սուած կը համարէր, եռանդուն սպաւորու-  
թիւն մը բնելով՝ մահառիթ վսանգ մը չը  
պատճառէ իւր հօրը :

Ամէն մարդ փառուեցաւ զնաց. եւ սենեա-  
կին մէջ մնացին մինակ ժողովրդապետը,  
Կոստանդին եւ իւր եղբայրը. (այս վերջինը  
հեռուն խորշ մը նստած էր, որպէս զի ծերը  
կարողանայ զինքը նշմարել կանթեղին ա-  
ղօս լուսովը) : Վիրաւորը ըսաւ ժողովրդա-  
պետին :

Իմ մեծարգոյ բարեկամս, այսօր նանչցայ  
քու արտիդ բովանդակ բարուքիւնն ու ազ-  
նուութիւնը. շատնցուրնէ ի վեր կուզէի ի-  
մացունել քեզ իմ գաղտնիքս, ապահով ըլլա-  
լով որ դու գայն հաւատարմաբար ի ծածուկ  
կը պահէիր : Բայց այսօր որովհետեւ ալ իմ  
անունս ծանօթացաւ, այսուհետեւ զգուշու-  
թիւնը օգտակարութիւն չունի, կը ցանկամ

իմ քունառութիւններս յայցնել : Ես եմ Պալ-  
զանսօրՅի ներքին խորհրդականը :

Կոստանդին տեսնելով որ ծերը կը սկսէր  
յոզնիլ, աղաչեց զինքն որ դադրի խօսելէ .  
եւ ինքը շարունակեց անոր սկսած պատմու-  
թիւնը :

« ՊալզանսօրՅ իշխանն օտարական ծա-  
ռայէ մը սպաննուեցաւ . իմ հայրս յանձն  
առած էր ժառանգաւոր իշխանին կրթու-  
թիւնը, եւ ինքը կը վարէր իշխանութիւնը :  
Աստուած զիտէր ինչ անշահախնդրութեամբ  
կը կատարէր իւր պաշօնը :

Ասոր վրայ մի խօսիր աղջիկս . ես միայն  
իմ պարտաւորութիւնս կատարեցի :

Շարունակեց Կոստանդին . « Ես եղբայր  
մը ունէի որ Համպուրկ գացած էր իմ հօր-  
եղբայրներէս մէկը տեսնելու համար : Իւր եր-  
թալէն ի վեր լուր մը չառիմք իրմէ :

Ո՛հ՛ ըսաւ ծերն ի խորոց արտէ հառաչելով,  
չպիտի տեսնեմք երբեք զինքը : Թէ որ դեռ ողջ  
է, Աստուած էվելցունէ իւր օրերը, եւ իմ վի-  
նակէս գերազանց վիճակներ պատրաստէ իրեն :

Մի վճատունէր դու եեզ հայրիկս, բու որ-  
դիդ դեռ ողջ է, եւ կուգայ բու ծերութեանդ  
բարեբաղդիկ օրեր վայելել տալու :

Երբոր Աստուած այս շնորհը ինձ պարգեւէ,  
կը փութամ վերադառնալ իմ հայրենիքս :

Շարլէզ այս խօսքերը լսելով խլրտեցաւ  
տեղէն ու ուզեց գալ նետուիլ ծերոյն գիրկը.  
բայց Կոստանդին նշան քրաւ իւր տեղը կե-  
նալու :

Դարձեալ իւր պատմութեան քելը ձեռք ա-  
ռաւ Կոստանդին : « Իմ մայրս ազնիւ եւ բա-  
րեպատէ կին մըն էր, եւ կրթեց զիս կրօնի  
վերաբերեալ բաներու մէջ, եւ մեծցայ ա-  
ռանձնակենցաղ վիջակի մը մէջ, բայց այս  
արգելք չեղաւ ազնուական երիտասարդի մը  
մէկ մոլեգին կիրքին ենթակայ ըլլալու :  
Հօրս զգուտութիւնը, եւ մօրս հոգերը՝ որով  
կը ջանար ամէն արտօս նայուածքներէ ազատ  
պահել զիս, կարող եղան զիս ապահով ը-  
նելու իւր զազիր խորհուրդներէն :

Ազատեցար անկէ երջանկաբար, աղա-  
ղակեց ծերը :

« ԽՈՒՎՈՒՔԻՆԸ ծագեցաւ Գաղղիայի մէջ  
 Եւ քանի մը տարիէն վերջը պատերազմը բոր-  
 բոսեցաւ մեր գաւառին հետ : Գաղղիացւոց  
 առաջին յարձակումը մեզի շատ նեղութիւն  
 տուաւ, բայց պատերազմին քանի մը տարիէն  
 ետքը Աւստրիացիք Բրուսիացւոց հետ միաբա-  
 նած հալածեցին յափճակիչները, Եւ կրցանք  
 ազատ շունչ առնել : Ապստամբութեան ոգին  
 արմատ ձգած էր մեր գաւառին մէջ. ուսի  
 հարկադրեցաւ հայրս խստութեան միջոցներ  
 ձեռք առնել, խոռովութեան ծագումն արգի-  
 լելու համար : Այս խստութիւնը նոր գաղա-  
 փարին կուսակիցներուն բարկութիւնը շար-  
 ժեց, Եւ երդում քրին հօրս վրայ մշտնջենա-  
 ւոր ասելութիւն պահելու : Իմ հետամուտս  
 ալ այս հօրս թեւամիներուն մէջ էր : Զինուց  
 վիճակը շատ ուշ յայտնելով Գերմանացւոց  
 քաջութիւնը՝ ազատ քողուց սահմանազու-  
 խը մեր թեւամիներուն : Գաղղիացի զօրե-  
 րը վարեցին քաջերը մինչեւ Ռէն գետ, Եւ սի-  
 պեցին զանոնք դարձեալ անցնելու այս գե-  
 տը : Անոնց մօտենալը տեսնելով ամէնքը փա-



խան. բայց հայրս որոշեց իւր դիրքին մէջ կենալու բնակչաց վսանգներուն մասնակից ըլլալու համար, որոնք որ իրենց բնակութիւնը չէին թողուցեր: Չուզեց նա եւ իւր ծերութիւնն անօգնական թողուլ:

Ի սկզբան յարգութեամբ վարեցան Գաղղիացիք հօրս հետ անոր առաքինութենէն ակնածելով. բայց շուտով գղջացիքն չհետեւեցնուս համար անոնց խորհուրդներուն՝ որոնք որ խրատած էին մեզ փախչիլ վերահաս թշուառութենէն:

Ինձի հետամուտ եղող անձն ապստամբներուն գլուխն էր, եւ ոչ մէկ պատեհութիւն մը չկորսնցուց գաւառին գործերուն գլուխ անցնելու համար, եւ յաջողեցաւ: Հայրս միտս իւր կամքին դէմ կեցած ըլլալուն համար յիսացեր էր անոր, եւ այս անգամ պատեհութիւն գտաւ անկէ վրէժ առնելու: Ուզեց բռնութիւնով պահանջել ինչ որ ջանացեր էր խորամանկութիւնով ձեռք բերել: Մեր չարիքներն ասկէ կը սկսին: Չեմ կարող եղի հասկցնել թէ ինչեր քաշեցինք: Քիչ քիչ

ինչքերնիս ձեռքերնուս յափեճակուեցան, ամէն նպաստներէ զուրկ զսանֆ, բաց ի անմեղութեան հարսութենէն: Աստուած որ մեզ միշտ պաշտպաներ էր, պահեց զիս մոլութեանց ապականարար հովէն:

Մեր քեճամին իւր անիրաւութիւններուն սա կնիք դրաւ. չարախօսելով հօրմէս, որ պէս թէ քանի մը բնակիչներու գլուխ անցնելով խստութիւններ գործածեր էր Գաղղիացւոց զօրքերուն դէմ:

Ան ասէն Գաղղիացւոց իշխանութիւնը մեզ բռնեց եւ նեճեց ստրերկրեայ խաւարային անձուկ բանսի մը մէջ:

Մոռցայ ինչպիսի ըսելու թէ պատերազմին ծագումէն ինչ մը ժամանակ առաջ մայրս մեռած էր:

Մեր բանսարգութեան ասէն ամէն կարծելի չարիքները կրեցիմք. վերջը քանի մը աղքատ գործաւորներ որոնք որ երախտիք զսած էին հօրմէս, օգնեցին մեզի բանսէն փախչելու: Երբ ազատութիւն զսանֆ, կերպարանքնիս փոխեցինք, եւ պատաստուան լաթեր հագած

փութացիցն սահմանագլուխն անցնելու : Ապահովութեան մէջ առաջին անգամ հացերնիս հարեցին զունեռուն առջին տալեր երգելով : Քիչ մը ետք իմացանք որ հրաման տուեր էր որ Լօրանհէն խորհրդականն ուր որ գտնան՝ բռնեն. ուստի պարտաւորեցանք գաւառին մէջ յառաջ երթալու : Բայց անցազիր չունենալով չէինք կրնար Ռէն գետն անցնիլ, որն որ պաշարած էր զօրաց գունդերէն : Անտեսն պաշտան դասեցինք գաւառէն հեռանալը, ուր որ էին զօրերը :

Ասկէ կէս մղոն հեռու պատահեցանք իմ հալածչիս, եւ իմացանք թէ կերթար Գաղղիական պաշտօնատարի մը : Ես հազիւ թէ ժամանակ ունեցայ անտառին մէջ նետուիլ ու պահուրսելու. հայրս զինքը չտեսնելով ֆովէն անցաւ. օրհնեալ է Աստուած որ կերպարանք փոխած ըլլալով անոր մտադրութիւնը վրան չարքնցուց : Հայրս իւր թեմամիներուն հետամտութենէն ազատ մնալու համար գիշերային պահպանութեան պաշտօնը յանձն առաւ, որն որ գեղին բնակիչներն իրեն մա-

սուցին : Բայց աս մեր վրայ յարձակողները  
մեր թշնամիներն եղած պիտի ըլլան , վասն  
զի գողի մը ցանկութիւնը գրգռելու բան մը  
չունէինք : Թերեւս նոյն ինքն իմ հետամուտս  
էր այս բարբարոսական գործը գործողը :  
Ինչ որ է նէ , պէտք է մեզ թողուլ այս գա-  
ւառը :

Բարեկամներս , ըսաւ իրենց ծխատէր ֆա-  
հանան , կը յուսամ կարող ըլլալ ձեզի մա-  
սուցանելու իմ ձեռնհասութիւնս : Քանի մը  
վայրկեանէն ֆաջ երիտասարդի մը կը սպա-  
սեմ որ այսինչ անուն դֆսին ներքին խոր-  
հրդականն է , որ այս գաւառին մէջ հրա-  
մայող հասուածեալ զօրապետին հետ ի միա-  
սին կարելու ծառայութիւն մը կրնայ ընել  
ձեզի :

Այս կերպով այս անակնկալ միաւորու-  
թեան պատրաստելով ձերը՝ հետեւեալ օրն ա-  
ռաւօտուն Լօրանհետեան երիտասարդը ներ-  
կայացաւ իւր հօրն առջեւ :

Ուրախութեան առաջին ներգործութենէն  
ետք , ըսաւ ձերը Շառլէզին , իմ սիրելի գա-

ւակս , ըսէ ինծի , ինչպէս կարելի եղաւ իմ դարձեալ զքեզ տեսնալս :

Իմ դիպուածներուս պատմութիւնը ետքի կը պահեմ , ըսաւ իրեն երիտասարդը , հիմա անոր գլխաւոր մասերը քեզի կը պատմեմ , որոնք պատճառ եղան մեր իրարմէ հեռու մընալուն :

Երբ Համպուրկ հասայ , իմ բարեկամիս հետ վտանգի հանդիպեցայ առանց մեր կողմէն պակասութիւն մը ըլլալու : Որովհետեւ քաղաքացւոց ընկերութեանը բազմութեան մէջ որոնք ինծի մեծաւուրէ երեւցան , մէկը չէի նանչնար , եւ երբ հարց ու փորձ ըրի , խոստացան զիս հօրեղբօս ներկայացնել , որուն հետ , կըսէին , սերտ սիրով կապուած եմք : Ծովեզերին մօտ ընդարձակ շինուածքի մը մէջ կեցանք : Օտարականներէն մէկը դուրս ելաւ , եւ քիչ մը ետքը վերադարձաւ , լուր բերելով թէ հօրեղբայս նախ մը մէջ կը գրտնուի՝ որ առաքասները բանալու վրայ էր , եւ նաւապետը վերջին հրահանգները կուտար : Խրատեցին զիս շուտով վրայ հասնելով եր-

թալ գինիք գտնել . որչափ որ նաւը չէի տե-  
սեր երբէք, փութացի : Բարեկամս ու ես ե-  
լանք նաւը, եւ դեռ նոր հասած էինք, եր-  
կար վերցուցին : Անասեն հասկցանք թէ ա-  
նարժան խաբէութեան մը զոհ եղեր էինք :  
Աղաչեցինք որ մեզի ազատութիւն տան, բայց  
անօգուտ եղաւ : Այս կերպով հասանք Ամրա-  
դէրսաւ, եւ անասեն Հոլանտիա պատերազմ  
ունենալով Ամերիկայի հետ՝ պատերազմական  
նաւու մը մէջ դրուեցանք : Մեր նաւարկութե-  
նէն քանի մը օր ետքը բարեկամս անցաւ ա-  
րեւելեան Հնդկներու նաւու մը մէջ, ան-  
կէ ետեւ իմացայ թէ Բարեյուսոյ Գլուխը Լա-  
զարիայի մէջ մեռեր է :

Լուսիանիա հասնելով ծանօթութիւն ըս-  
տացայ Գերմանացի պարկեշտ սնկագործի մը  
հետ, որ վերստին գնեց զիս եւ խրկեց իւր տու-  
նը : Այս մարդը տեսնելով որ օրէ օր եւրո-  
պա տեսնելու փափաքս կէվելնայ, խոսա-  
ցաւ խրկել զիս : Նաւորչէքս վնարելու հա-  
մար եւրոպա վերադարձող նաւուն մէջ ծա-  
ռայութիւն ըրի : Թշուառաբար Անգղիա-

կան միայնակ նաւէ մը բռնուեցանք որ մեզ Իրլանտիա գերի տարաւ: Գերութիւնն անտանելի գալով ինձ՝ Արեւելեան Հնդկներու նաւու մը մէջ ծառայութեան մտայ, եւ ուրախութեամբ Բենկալայի նանապարհորդութիւնը կատարեցի: Եւ երկու ամիսէն ետք վերադարձանք Լոնտրա, ուր Գերմանացի իշխանի մը հետ ծանօթութիւն ստացայ. որ ինձի մարդասիրութիւն ցոյց տուաւ, եւ իբրեւ մասնաւոր փարսուղար զիս իւր բովն առաւ: Որուն հետ Հիւսիսային գաւառներն ծովագրնաց նամբորդութիւն մը ըրի. եւ իշխանին հօրք մահուանէն ետք ներքին խորհրդական եղայ:

Այս բարեբաղդ պատահմունքէն ի վեր կուզէի հեզի գիր գրել, բայց հեզի յանկարծ ուրախաբար զարմացում մը պատճառելու ցանկութիւնը զիս կարգելուր միտ: Հուսկ յետոյ Գաղղիայի հետ պատերազմը վրայ հասնելով չկրցայ խորհուրդս կատարել: Վերջապէս երթալու հրաման ստանալով եկայ այս գաւառիս մէջ, ուր ամենեւին չէի կարծեր զտնայ

ե՞զ այս աղփասի կերպարանով, եւ քու աս-  
տիճանիդ անարժան պաշտօնի մը մէջ . բայց  
օրհնեալ է Աստուած որ դարձեալ իրար տես-  
նելու արժանացանք :

Մէկ խօսք մը , սիրելի զաւակս , ըսաւ ի-  
րեն ծերը վսեմ բարբառով մը , հաւասարիմ  
մնացի՞ր քու կրօնիդ :

Այն հայրս , հաւաստի երբէք չթողուցի .  
որն որ քու ինծի տուած կրթութիւններուդ  
պտուղն է : Եւ իմ վաս օրերուս մէջ նանչցայ  
թէ որքան հարկաւոր է կրօն մը ունենալը ,  
որով կրնայ մարդ զինքն մխիթարել իւր վիշ-  
տերուն մէջ , որմէ դու զե՞զ զուրկ կը զտես-  
նիր սոսկ բանականութեամբ : Այն հայրս ,  
ես քիստոնեայ եմ , քիստոնեաբար պիտի  
ապրիմ , եւ քիստոնեայ պիտի մեռնիմ :

Մերունի Լօթաննէնը շուտ մը նանապար-  
հորդութիւն ընելու չափ բաւական զօրու-  
թիւն ստացաւ : Թէպէտ իւր հին բարեկամ ժո-  
ղովրդապետէն բաժնուիլն իրեն շատ ցաւա-  
զին եկաւ , բայց տղուն բաղձանքներուն դէմ  
չկրցաւ կեցեր էր :



Իրենց սեղր հասնելով ծերունի Լօթանիէ-  
նը իւր ձիրքերուն արժանավայել գործակա-  
լուքին մը ձեռք բերաւ . եւ քիչ ժամանա-  
կէն ետքն իմացան որ իրենց թնամին իւր  
դիմամրցանակ հակառակորդներուն հնարք-  
ներովը զոն եղած էր :

Լէնճանպուրկի բնակիչները միտք կը մտա-  
ծէին իրենց գիշերային քաջ պահապանին  
վրայ , եւ կը ցանկային անոր իմաստուն խը-  
րասներուն :



ԼՈՒԻԶ

Հազար եօթը հարիւր իննսուներեք դարուն վերջերը ֆաղափական խռովութիւնն ու ապրսամբութիւնը՝ Գաղղիան սակն ու վրայ կրնէր, բայց Վօկժիայու լեռներուն մէջ խոր խաղաղութիւն մը կը սիրէր: Այս զաւառին բնակիչները միմեանց հետ եղբայրաբար կենցաղավարելու սովրած ըլլալով՝ ազնուականներուն հետ ասելութիւն ունենալու առիթ մը չունէին: Անոնց ֆով ազնուականը կը համարուէր լիաձեռն բարերարութիւններ ընելու ձեռնհաս բարեբաղդիկ անձ մը:

Վօկժիացիք սակաւապէտ ու զգաս կեանք մը վարելով չէին զգար այն կարօտութիւնները, որոնք որ ֆաղափացիները կը տառապեցունէին, եւ չէին վերցուններ իրենց խորհուրդը պերնաշուք իշխաններուն վրայ, որոնք

որ բազմացեր էին գաւառին մէջ. ինչու որ  
չէին կարծեր թէ պերճութիւնները՝ զորոնք որ  
իրենց մէջէն ունակ բերեր էին արժունիքէն,  
կրնան մարդս երջանիկ ընել: Մարդուս  
նախկին դարերուն արժանաւոր եղած իրենց  
խնայասութիւնովն ու պարզութիւնովն ինչ  
քան որ մարդուս կենացը կարելու պէտքէն  
դուրս էր, կարհամարհէին իբրեւ դասարկա-  
կեաց մարդու պաշտականներ, որոնք որ եր-  
կրագործ մարդու մը համար անպիտան են,  
որ ամէն մէկ տարուան պարէնը կը խնդրէ  
երկրէն, եւ մինակ կը նանչնայ աշխատու-  
թեան հետեւորդ հանգստութիւնը: Այս բարի  
լեռնայիներուն վարքը բոլորովին համանը-  
ման էր նահապետական կենաց: Լման շա-  
քաթ մը շարունակ կաշխատէին, եւ իրենց  
հանգստութեան օրն էր մինակ Կիրակիներու  
ու տօներու նուիրական օրերը՝ կատարեալ  
սուրբ պահելով, նաեւ օրուան մէկ մասը  
բարեպաշտական կրթութեան կը գործա-  
ծէին: Իրենց զբօսանքն իրենց վարքին  
նման պարզ եւ անպանոյն էր, եւ ամէնքն

իրենց սանր մէջ առաքինութիւն կը շնչէին:

Այսպէս ֆաղափական կարօտութիւններու անգէտ պարզ ախորժակով մարդիկ ըլլալով՝ հայրենիքը սակնուվրայ ընող մեծայոյզ շարժմունքներուն առանց փառասիրութեան գրգիռ մը զգալու սոսկ դիտող կը հանդիսանային . որն որ յեղափոխութեան մերիկներուն մէջ ամենէն ֆաջակուռ մարդոց վրայ կարձակէր, ուրկէ դուրս կելլային մինակ անհնարին վնասներ կրելով:

Յիրաւի կարող եղած էին իմանալ թէ մարդս իւր փառասիրութիւնն ու հպարտութիւնը գոհ ընելու համար իւր կեանքը վսանգի մէջ կը ձգէ, զոր կրնար հանդարտութեան նուիրել: Այսպէս Վօկոթիացիք ամենեւին խռովութիւն մը չէին յարուցաներ ազնուականաց դէմ, որոնք որ կուգային անոնց ֆով պասսպարան մը փնտռելու, կը համարէին զանոնք հալածեալ ըլլալովնին իբրեւ իրենց գրութեանն իրաւունք ունեցող թուառ եղբայրներ. եւ ընկերութեան մէջ երկար ատեն խաղցած խաղերովնին դասապարտեալ ըլ-

լալնի՞ն իրենց համար զանոնք արհամարհելու նիւթ մը չէր . ինչու որ ամենեւին անոնցմէ հարսահարութեան կարծիք մը չունէին :

Էբինալէն երեք մղոն հեռու կը բնակէր Վօսրէեան կոմսը , որուն ընտանիքէն ելած էին երեւելի դասաւորներ , քաջ զինուորներ ու պալատականներ . որոնց ամէն մէկն իրենց հայրենաժառանգ սովորութեանը համաձայն հաւատարմութեամբ հայրենեաց պարտերնին վճարելէն ետք կը մտնային հայրենի վաղընջական բնակարաննին , եւ այն տեղ կը հանգրստանային գործերու զբաղմունքներէն եւ պալատականներուն հնարքներէն : Իրենց բրնակութիւնն ուր որ քաղաքայնոցազնուական կենցաղը , ու գեղջկայնոց անկեղծ մարդասիրութիւնը միմեանց հետ աջակցեալ կը բրնակէին , բացեալ պատասպարանմըն էր ամէն անոնց՝ գորոնք որ դժբաղդ դէպքերը վերջին ծայր խտուրտեամբ կը հալածէին : Վօսրէեան ընտանիքին անդամներէն ամէն մէկն ազնիւ զգացմունքներու մէջ մեծնալով՝ կրօնական խղմմտանքով մը իրենց նախնեացը բա-

րեւարութեան աւանդութիւնը կը պահէին . եւ երբ որ իրենց նախնեացը բարեւարութեան , մարդասիրութեան ու առաքինութեանցը ֆաջ աւանդապահներ չըլլային , Վօսրէեան վաղրնջական բնակութեանը մէջ բնակելու իրաւունքը կը կորսնցունէին :

Արժունի խմբի մը գնդապետ Վօսրէեան Շարլէզ Գերմանացոց պատերազմին մէջ ազդու վերջ մը առնելէն զկնի թողուց իւր պատօտը . եւ ֆանի որ յեղափոխութեան խռովութիւնը կը յուզէր իւր հայրենեացը մէջ , ինքն իւր նախնեաց ամբողջ ֆաշուած խաղաղիկ կեանք մը կանցունէր , եւ երբէք խռովութեան պատճառ եղած վէճերուն մասնակից չէր ըլլար : Այս մարդը մօտեղերու իշխանի մը աղջիկ Ռէնեան իմաստունի եղիսաբեթին հետ ամուսնացած ըլլալով՝ անկէ սիրուն ու գեղեցիկ աղջիկ մը ունեցաւ . այս իմաստուն իշխանն իւր բոլոր պարապ ժամանակներն իւր սիրելի Լուիզը կրթելու կանցունէր :

Մայրը կը մեծցունէր զինքն գերաշխարհիկ

առաքինութեանց սկզբունքներու մէջ, եւ խղնամսանաւոր հոգածութեամբ մը կը հսկէր անոր կրօնական կրթութեանը վրայ: Սէւպ կըսէր իւր աղջկանը, իմ սիրելի զաւակս, առանց կրօնի մարմնաւոր կրթութիւններն անօգուտ են. գերագոյնս արդար Աստուծոյ վրայ եղած հաւատքը՝ որ կը պատժէ չարերն ու կը վարձատրէ բարիները, ամէն առաքինութիւններուն հիմն է: Արդարն աստի կենաց համբուն մէջ հանդերձեալ կեանքին մխիթարական մտածութիւններովը կը պատշապանէ զինքը, եւ անով զօրանալով կարող կըլլայ փորձութեանց ու չարիքներու դէմ դնելու, ու համբերութեամբ սանելու. որոնք որ յանախ կը յարձակին բարեպատշ ու երկիւղած անձանց վրայ:

Այս ջանքին մէջ Վօսրէեան տիկինին մեծապէս ձեռնու եղած էր Կրանդշանի վանահայր մեծարգոյ անձը. որ մօտէն տեսնելով հաղաքներուն ապականութիւններն ու մութութիւնները՝ եկեր էր լեռներուն մէջ հանդարտութիւն ու խաղաղութիւն փնտելու,

որոնք որ հալածական կը վարէին ֆաղաֆներէն: Այս ազնուամեծար ֆահանայն եօթանասուն տարեկան ծերունագարդ հասակին մէջ կենդանի օրինակ էր ամէն ֆրիստնէավայել առաքինութիւններու: Այս մարդուն յանձնած էր Վօսրէեան ազնիւ ընտանիքը թրուտաններուն այցելութիւն ընելու եւ իրենց առաստածուն պարգեւներն անոնց տանելու պատշօնը:

Այս բարի ֆահանային մարդասիրութիւնը նիւթ էր. թող չէր ի տար միտք զինքն ի գուրջարժիլ ցաւալի տրտունջներէ եւ հեծեծանքներէ, կը ջանար խնդրել իմանալ թէ ինչ ինչ պատճառներով իւրմէ օգնութիւն խնդրողները թուտութեան մէջ ընկղմած էին: Թէ որ յանկարծահաս չարեաց զոն եղած էին, անկասկած կուտար իրենց առատ ողորմութիւն. բայց թէ որ անառակ վարձով, գործերնին չգիտնալով, կամ անխոհեմութիւնով թուտացեր էին, դրամական օգնութենէն անելի կարելու կը համարէր անոնց իւր փրկառիթ խրատներուն պարգեւը տալը՝ զոր



միշտ կուսար խոնարհ հոգևով որ նշմարիս  
ֆրիսոնեաներուն յաւուկ նշանն է: Չէր ջա-  
նար երբէք սպառնալից խօսքերով ահաբեկ  
ընել մեղաւորը, հապա ընդհակառակն կը  
յուսադրէր. ցոյց տալով թէ՛ ինչպէս միշտ  
պատրաստ է Աստուած զղջացող մեղաւորին  
ներելու:

Վօսրէեանին բնակարանն առ հասարակ  
ամենուն ծանօթ եղած էր, ուր որ երթելէկող-  
ներն անպակաս էին: Այս ընտանիքին ազ-  
նուական կենցաղը գիտես թէ Վօկժիացի գե-  
ղացիներուն բրտութիւնը կերպարանափոխ  
ըրած էր. եւ թշուառութեան մէջ ինկած տա-  
ղանդաւոր անձինք այն տեղ կը գտնային ա-  
պահով պատսպարան մը: Պ. Վօսրէեան ե-  
րեւելի երաժիշտ էր. իւր կիներ բնականաբար  
բանաստեղծութեան ոգի մը ունէր, շատ ան-  
գամ իւր այս ձիրքը բարեպաշտական բանաս-  
տեղծութեան կը գործածէր, եւ իւր Լուիզ  
աղջիկը նկարչութեան հանճարեղ ձիրք մը  
ունէր:

Պ. Վօսրէեան չէր այն իրենց պատուա-

նուններովը չարաչար վարուող ազնուականներէն, որոնք կը կարծեն թէ իրենց ցեղին ազնուականութիւնը, բարեբաղդութիւնը, ու իրենց պապերուն ձգած հարսութիւնը հարկ չեն դներ իրենց վրայ սաղանդներ վասկելու, որոնք որ մարդս կը փառաւորեն ու կը զարդարեն, եւ իրենց վիճակին անվայել՝ սրգեղ ուսմունքներու կը հետեւին: Պ. Վօսրէեանը յօժարութեամբ կընդուներ նոր գաղափարները, թէ որ յեղափոխութեան կուսակիցներուն անառակ ընթացքն ու անկարգութիւնները զինքը չվախցունէին հասարակաց գործերուն միջամուխ ըլլալէն, վասն զի չէր ուզէր մեղսակից ըլլալ անոնց՝ որոնց գործերուն որ չէր հանէր արտօք: Վեհանձն եւ միանգամայն անձնանուէր էր, անխնայ կրնդունէր իւր հիւրընկալ երգին սակ որով մասամբ եւ իցէ մահապարտները: Հալածեալ Քահանայն, հասարակապետականը որուն դէմ որ լեռնային սոսկալի վնիռները արձակած էին, իւր ամրոցին մէջ ապահով պասքապարան մը կը զտնէին, ուր թռուառու-

քեան մխիթարիչ ամէն պէ՛տ էղած մարդասիրութիւնները կը վայելէին :

Իւր վեհանձն գրութիւնովը մարդասիրաբար ընդունած մարդոց մէջ կը գտնուէր Նորասուլնեան մասնաւոր ասպէտ մը: Ասի համբաւը կորսնցուցած, սնանկացած, անսանձ խաղացող, եւ չափազանց անառակ մարդ մըն էր: Արժուեաց ու ազնուականաց կարգէն՝ որոնց որ նախասինք էր , վռնուելով՝ ասելուքեան ու վրէժխնդրութեան հոգուով գրնաց միաբանեցաւ ժաֆօպիներուն հետ: Լիրը չարախօսն արդէն մասնած էր սպանութեան անմեղ զոհ մը. երբ կարգն իրեն եկեր էր, վասութեամբ փախեր եկեր էր Պ. Վօսրէեանէն պատասպարելու տեղ խնդրելու: Կոմսը զինքը մեծարանօք ընդունեց, եւ խաբուեցաւ անոր մեղրածորան խօսքերէն: Այս կեղծաւորը դուրսէն գերաշխարհի առաքինասէր կերպարանք մը ցոյց կուտար, եւ մեծաձայն կորոտար ժաֆօպիներուն դէմ, զինքը ազնուականութեան թշնամիներէն զոհ էղած կը կարծեցրնէր, եւ վեհ դիտաւորութիւն մը կը ցուցու-

նէր դարձեալ միաբանելու Վանսէնեանին կուսակիցներուն հետ: Իւր խօսքերուն մէջ տարապայման ջանք մը կը ցուցունէր քազաւորը պատշապանելու մասին, եւ իւր հասարակապէտականներուն դէմ խրոխտմունքները վերջին ծայր խիտ էին, անանկ որ Պ. Վօսրէեանը կը ջանար իւր իմաստուն խօսքերովը մեղմացունել անոր եռանդը, եւ իւր ծաղկահասակ բարեկամը կանուանէր զինքը:

Նորասունեանը կարող չէր եղած շնորհաձողիկ Լուիզին զմայլարար գեղեցկութիւնը տեսնալու առանց մոլեկան կրից բոց մը զգալու իւր սրտին մէջ. այս ազնիւ աղջիկը դեռ անասեն տասնեւեօթը տարեկան էր. եւ որովհետեւ Պ. Վօսրէանին մէկհասիկ զաւակն էր, ուսի ուզեց Նորասունեանն անոր հետ ամուսնանալ, որպէսզի իւր գործերը կարողանայ կարգի դնել: Մեծ յարգութիւն ու բարեկամութիւն կը ցուցունէր Լուիզին, որոնց վրայ որ Լուիզ չէր թէ մինակ չէր հեշտանար, այլ նաեւ կը զգուէր ու կը սոսկար անոր բանեցուցած ձեւերէն ու շարժմունքներէն,

որ միտս իւր հետք ձեզձեքանում ու ակնկալութեամբ կը խօսէր . որոնք որ պարզ մեծցած աղջկան մը սէրն իրեն յարեցունելու յարմար միջոցներ չէին :

Այս մարդը կարծելով թէ Լուիզին հանուրիւնը ձեռք բերած է իրեն հետ ամուսնանալու համար, գնաց գտաւ Պ. Վօսրէեանն եւ խնդրեց անկէ որ անոր հետ պսակուի :

Բարեկամս , ըսաւ իրեն կոմսը , ուրախութեամբ պիտի տեսնեմք քու իմ սիրելի Լուիզիս փեսայանալդ , ինչու որ քու վրադ գայ իմ ընտրութեանս յարմար բարի յատկութիւններ : Բայց չեմ կրնար առանց իրեն հանութեանն իւր ձեռքը տալ : Աստուած ինձի չվստահացաւ եղիսաբեթին սիրոյն այս ազնիւ գրաստանկանը դասապարտելու համար զինքը մտնեցնաւոր վիճեցնով իւր սիրքը չուզած մարդու մը հետ ամուսնացունելով :

Ասպէսն ապահով կարծելով զինքն իւր յաղթութեանը վրայ՝ հանեցաւ որ հարցուի Լուիզին :

Պ. Վօսրէեան առաւօտուն ժողովեց իւր ըն-

սանիֆր, որոնց հետ միաբանեց նաև Կրանդ-  
շանի վանահայրը, եւ յայտնեց իրենց ասպե-  
տին խնդիրը: Ուր գովեց Նորասունեանը, եւ  
անոր անձնանուիրութեան ազնուութիւնը  
չափազանց խօսեցրով բարձրացուց. վասնզի  
անանկ համոզուած էր թէ, որպէս թէ նոյն  
խակ ինքն առաքինութիւնն էր այս մարդը:

Եղիսաբէթ իւր աղջկանն երեսը դիտեց նա-  
յեցաւ, աչքերէն հասկնալու համար թէ ինչ  
կը մտածէր այս առաջարկութեան վրայ: Լուի-  
զին երեսը մոխիր էր դարձեր, ու կըրտեսնուէր  
հաճութեան ու խոժոռութեան նշաններ՝  
գորոնք որ իրեն կը պատահուէր այսանակրն-  
կալ խնդիրը: Իւր բարեւէր մայրը եւս վօս-  
րէեանին նման խաբուէր՝ էր Նորասունեա-  
նին կեղծաւորութենէն, եւ այս միաբանու-  
թիւնը կը համարէր իրենց ընտանեացը հա-  
մար հաստատուն երջանկութեան գրաւական  
մը:

Իմ սիրելի Լուիզա. ըսաւ իւր աղջկանը,  
Նորասունեանը կը հանի քեզի փեսայանալ:  
Լուիզ կարմրեցելով գետնը նայեցաւ, եւ քո-

քովելով քանի մը դժուարիմաց խօսքեր ար-  
տասանեց :

Անասեն Կրանդեանի վանահայրը սկսաւ  
խօսիլ, ու ըսաւ կոմսին ու կոմսուհիին,  
ես վրաս կառնեմ Լուիզին տեղ պատասխան  
սալը : Ես քննեցի իմացայ ասպետը, եւ չեմ  
կրնար ձեր վրայ ներգործած զարմացմանը  
մասնակից ըլլալ : Ճանչցայ անոր խորաման-  
կութեանն ու կեղծաւորութեանն անյասակ  
խորութիւնը : Ան առաքինութիւններն ու  
խստամբեր վարքն որ ցոյց կուտայ, ամենա-  
դժբերութի մոլութիւններու կեղծիք են, որոնք  
միշտ ունին վնասակար նպատակ մը : Չափա-  
զանց կեղծաւորութեամբ փարեսացաբար բա-  
րեպաշտանայր պարզամիտները խաբելու հա-  
մար արուեստակեալ նարսարութիւն մըն է :  
Յայտնի ու բացագլուխ անկրօնութիւնն ար-  
համարհելի է, բայց կեղծաւորին խաբէու-  
թեանը չստի վստանալու չէ : Վասնզի առա-  
քինութեան դիմակն առնելով կրնայ քեզ  
դիւրաւ քակարդի մէջ ձգել :

Պատասխան տուաւ Պ. Վ. օսրէեանը, հայրս,

Ես անսարակոյս քու խրատներուդ կը հնազանդիմ, բայց առ սեղ ես զիս կարող կը կարծեմ ներհակելու այս ծուռ կարծիքին, որուն որ ենթակայ է Պ. ասպետը: Մեր ընտանեացը հետ իւր տեսութիւններուն մէջ միտ շնորհալի ու ամենաբարձր երեւցաւ, չեմ կրնար կարծել թէ այնչափ բարեզգեսաց մաքուր վարքի մը մէջ ապականեալ սիրտ մը պահուրսցրնէ:

Պ. Վօսրէեանն եւ ամէնքն ասպետէն աւելի անաչառ դատելով վանահայրը՝ պարտաւորեցան ծերունիին խրատներուն ունկնդիր ըլլալու, որ մինչեւ որ մէկ բանն աղէկ մը չֆննէր չիմանար, յառաջ չէր բերեր:

Իմ սիրելի Եղիսաբէթս, ըսաւ կոմսն իւր կնոջը, որո՞ւմ մը ընելնէս առաջ հարցունենի մեր Լուիզին, թէ որ ասպետն իրեն հանելի չէ, մեկ դի քողունք այս խորհուրդը, որ թէպէտ հեռուէն մեզի երջանիկ բարեբաղդութիւն մը կը ներկայացունէ, բայց կրնայ ըլլալ որ ժամանակ անցնելով մեզի աղի արտասուքներ թափել սայ:



Լուիզ Կրանդշանի վանահայրին ներկայութեամբը սրտոտելով պատասխան տուաւ իւր հօրը թէ վերջին ծայր ներհակութիւն մը զգացած էմ ասպետին վրայ: Իւր խեղճացած շարժումները, խաղապատանքները, լեզուին մէջ գործածած ձեւձեւանքներն ու շինծու քաղցրութիւնը, սնապարծութիւնը՝ որով հաննն ուղտ կրնէր իւր յարգը ցոյց տալու համար, իւր մանր մունր քրտած բարեբարութիւններուն ընծայած փառքն ամենամեծ պատճառներ են՝ որ զինքը ինծի ասելի կրնեն, ու զիս իրմէ զգուիլ կուտան. եւ միաբանութիւն մը դաշնադրելու երկիւղն որ եեզ ու զիս թշուառ պիտի ընէր, հարկադրեց զիս յայտնելու թէ երբէք չեմ ուզեր ձեռքս անոր տալ:

Կրանդշանի վանահայրին նայուածքն իմացուց Լուիզին թէ գոհ էր իւր հաստատութենէն, եւ ժամանակ անցնելով պիտի վաստակէր իւր պատճառը:

Երկար քննութիւններէն ետքը որոնց մէկն ալ նպատակաւոր չէին ասպետին, որոշուեցաւ որ պատասխան տուի ասպետին թէ, Լուիզ

դեռ տղայ ըլլալով ժամանակը չէ ամուսնանալուն, եւ թերեւս ժամանակ անցնելով իւր խնդիրն ընդունելի ըլլայ դեռաբուսիկ աղջրկան :

Պ. Վօսրէեան ժողովէն ելլելով գնաց փրկօքնելու ասպետ, որ փակին մէջ կը շրջագայէր, եւ երկիւղներ կը յղանար կոմսին յուշիկ քայլը տեսնալով, որ պատասխան կը բերէր իրեն. եւ անոր զգուշաւոր կերպարանքէն իսկոյն հասկցաւ որ իւր խորհուրդը չէր յաջողէր, եւ իւր խնդրոյն մերժումը պաղ կերպով մը ընդունեց :

Հետեւեալ օրն առաւօտուն կանուխ մէկու մը մնաք բարով չըսած թողուց ամրոցն ու գնաց երբնալ, եւ իւր լրտեսներուն մէկուն ձեռով ի նպաստ իրեն հասարակապետական ասեանին դիտաւորութիւնները քննել իմանալէն ետք, որոշեց իւր դժոխային խորհուրդն ի գործ դնելու, Վօսրէեան կոմսէն վրէժ առնելու համար :

Փութաց ամբաստանելու կոմսէն արեան ասեանին. պատահականներ բերելով թէ կոմ-

սը միաբանած է զօրաց գլխաւորներուն հետ,  
եւ թէ ինքը բողոքեր էր ամրոցը չէ թէ ուրիշ  
բանի մը համար, հապա մինակ կոմսին քա-  
խանձանքներէն ազատելու համար. որ իբր  
թէ ուզեր էր ստիպել զինքը քաղաւորական-  
ներուն մէջ ծառայութիւններ ընելու :

Փողովոյն նախագահն որ իւր զոհերուն  
բուռովը կը համրէր իւր ծառայութիւնները,  
եւ այնչափ հայրենեաց օգտակար եղած կը  
կարծէր զինքը, որչափ որ գերագոյն կարգէ  
անձ մը իւր մահաբեր հանկը ձգէր, անմի-  
ջապէս մաքդ խրկեց ամրոցը պաշարելու,  
եւ բանտ նետել տուաւ Վօսրէեանն ու Կրանդ-  
շանի վանահայրը, որուն համար եւս իբրեւ  
մեղսակից ընկեր կոմսին չարախօսեր էր :

Այս անակնկալ դիպուածն ամրոցին բնա-  
կիչները խորին ցաւոց մէջ ընկողմեց, եւ կոմ-  
սին հպատակներն անոր բանտարկիլն իմա-  
նալով չկրցան իրենց արտասուքը բռնել :

Այս աղէտալի անցքին հետեւեալ օրն ան-  
հնարին սուգ տիրած էր ամրոցին մէջ: Գիշերը  
հասաւ, եւ անդադար կուլար կոմսուհին

իւր աղջկանը հետ մէկտեղ : Դէպ ի ժամը տաս-  
ներկուփն բերդապահն եկաւ իմաց տուաւ  
Նորատունեանին գալը , որ զարհուրած դէմ-  
քով մը մտաւ սրահը , եւ ըսաւ կոմսուհիին :

Իմացայ , սիկին , խորին ցաւօք քու պատ-  
կակցիդ բանտարկութիւնը , եւ կուգամ ֆե-  
զի այս սրտալի պարագային մէջ իմ ծառա-  
յութիւններս մատուցանելու :

Պ . Ասպետ , պօռաց կոմսուհիին , դու գի-  
տես որ իմ այս յանցանք չունի :

Վերջին աստիճան ծանր կասկածներու տակ  
ինկաւ , եւ ես հեմարիտ պատժապարտ կը  
նանչնամ զինքը :

Ի՛նչպէս , Պարոն , պատժապարտ կը նանչ-  
նաս զինքը . դու երկար ժամանակ մեր մէջը  
չկեցա՞ր , չսեսա՞ր որ մենք հասարակաց գոր-  
ծերուն չէինք խառնուեր , հապա մինակ պա-  
տահած աղէտից վրայ կուլայինք , որոնք մեր  
հայրենիքը խեղճուլայիք կընէին :

Պատասխան տուաւ ասպետը . իւր քաղա-  
քաւորներուն հետ ունեցած բարեկամութիւ-  
նը նանչցուելով ժողովն իւր գաղափարնե-

րուն վրայ կասկածի գնաց. սակայն դեռ իւր ազատութեան յոյսը կտրուած չէ, եւ իմ ազդուութեամբս կրնամ ժողովը ֆեզի բարեկամացունել :

Անաստեն աղաղակեց Լուիզ, ճի, երանի թէ կարենայիր, որչափ երախտագէտ կըլլայինք ֆեզի :

Պատասխանեց ասպէսը, գեղեցիկ Լուիզ, այս կարելու ծառայութեանս մրցանակ մը կը պահանջեմ :

Ինչ որ ուզես ամէն բան ֆեզի կը շնորհուի, բաւ կոմսուհին :

Սիրուն աղջկանդ ձեռքը կուզեմ :

Սիրուն աղջկանս ձեռքը :

Հրամես, սիկին, այս գնով միայն կը հանիմ ժողովին նախագահին գթութիւնը քու երկանդ վրայ կոչելու :

Լուիզ այս պայմանը լսելով երեսին գոյնը փոխուեցաւ, եւ վրան մարելիք եկաւ, բայց իւր հօրն ազատութեան յոյսը զինքը զօրացուց, եւ գիշեր մը ժամանակ խրդրեց ասպէսէն անոր վրայ մտածելու :

Նորասունեանք փառուեցաւ զնաց, եւ խօսի  
սուաւ հետեւեալ առաւօսուն զայլու: Իւր նող-  
կալի խորհուրդն էր պսակելով Լուիզին հետ  
անոր անբաւ ինչեքունն տէր ըլլալ, եւ մա-  
հուան դասապարտել զալ կոմսն ու վանա-  
հայրը՝ որ երկուքը մէկտեղ իւր կամքին դէմ  
կեցած էին:

Ասպետք երթալէն ետքը Լուիզ նետուեցաւ  
մօրք գիրկը, եւ ըսաւ իրեն, հօրս ազատու-  
թեանը ուրիշ նար մը չկրնալով զտնել կը մը-  
տաբերիմ ասպետին խնդրոյն հաւանութիւն  
սալ: Քանի մը վայրկեանէն յետոյ սոսկական  
մարդ մը առանց իմաց զայլու մտաւ սրահը  
եւ սուա կոմսուհիին կնիեալ թուղթ մը ու  
ես փառուեցաւ զնաց:

Վօտիեան սիկիւնն արտօրնօք բացաւ նա-  
մակն եւ կարդաց հետեւեալ խօսիւերք:

«Իմ սիրելի բարեկամս, Ասուած կուզէ  
քու հաստատութիւնդ փորձել զիս իրեն  
կանչելով, եւ միմակ թողուլ ինձ երկրիս վը-  
րայ. արդէն իմ մահուանս վնիւրք տուեցաւ:  
Իմ ամբաստանողս Նորասունեան ասպետն է:

Մի վստահիր անօր : Այս նամակը վերջինն է  
որ կրնդունիս ինձմէ : Մնաս բարով իմ սիրե-  
լի Եղիսաբէթս . մնաս բարով եւ դու իմ  
սիրելի Լուիզա : Մեզի համար մարդոց ար-  
դարութենէն յոյս չկայ : Երկինք դարձեալ ի-  
րար կը սեսմանք : Աստուած պիտի վարձասրէ  
մեր առաքինութիւնները : Դարձեալ մնաս  
բարեալ եւ խաղաղութեամբ .

Շարլէզ Վօսրէեան » :

Այս նամակը սարսափեցուց կոմսուհին ,  
եւ յորդորեց իւր աղջիկն որ չկասարէ անօ-  
գուս զոն մը , հանելով այնպիսի մարդու մը  
խնդրոյն որ իրենց բնանեացը կորսեանը  
վրայ երդում ըրած էր : Այն ինչ արելը նա-  
խարձակ նառագայքներովը կը լուսաւորէր  
երկնաբերձ լեռներուն սրածայր գագաթը , ի-  
մաց տուեցաւ ասպետին գալը : Չէ թէ առջի  
օրուան պէս խոնարհ կերպարանով մը ե-  
րեւցաւ , հապա խիս ու բարձրապարանոց  
դէմնով մը , իւր դէմքը կը ցուցունէր յաղթու-  
թեանը վրայ աներկեւան ըլլալը :

ՎՕՏՐԷԿԵԱՆ ՏԻԿԻՆԸ անոր ժամանակ չթողուց, Եւ ՇՈՒՏ մը մասուց իրեն իւր Երկանը նամակը:

Ասպէսը վայրկեան մը վեհ կերպարանք կորսնցուց, բայց ինգիկներ յաղթելու սովրած ըլլալով, ըսաւ կոմսուհիին բարկանալ ձեւանալով. այս սուկալի գրպարսութիւն մըն է, Եւ Ես պատրաստ եմ ինչ պատկանցիդ տեղ իմ արիւնս թափելու. թէ որ հարկ ըլլայ, Ես իմ անձս կը նուիրեմ իւր գլուխն ազատելու համար:

Գնա, Պարոն, ըսաւ իրեն կոմսուհին. մի գար իմ աշխարհիս մէջ ամենէն սիրելիիս արիւնովը շախատած ձեռնովդ ինձմէ աղջկանս ձեռքը խնդրելու: Ես հասկցայ ինչ զարհուրելի միտքդ, Եւ կարող պիտի ըլլամ մեծամեծ շարիքներ կրել, քան թէ օգնութիւնդ խնդրել: Կորիք ի բաց գնա, եթէ ոչ բռնութեամբ հանել կուտամ քեզ ամրոցէն, որուն որ դեռ տէրը չես: Բայց թէ որ յաջողիս մեր կողոպուտներովը հարսանալ, քեզի մարգարէաբար կիսազուրկեմ որ ամէն բարի մարդոց ասելու-



թիւնն ու արհամարհութիւնը հետդ պիտի ունենաս. ասպէսն ուզեց պատասխան տալ, բայց կոմսուհիին վեհ շարժումը պատանձեցուց զանի. վասն զի առաքինութեան ազդուութիւնը զօրաւոր է՝ որուն չկրցաւ դէմ կենալ. եւ առանց պատասխան մը տալու կարող ըլլալու բոլորովին այլայլած դուրս ելաւ. եւ անմիջապէս էբինալ գնաց Վօսրէեանին դասաստանը փութացունելու համար :

Ասպէսին անհամբերութեամբ սպասած ու բանտարգելոյն ընտանիքին ամենազարհուրելի օրը վերջապէս երեւցաւ : Ժողովին նախագահն արհամարհեց կոմսին արդար փաստերը, առաքինութիւնն ու բարեբարութիւնն որոնք իւր կենացը հաստատուն սահմանն էին, ազդուութիւն մը չունեցան ժողովոյն անեանին մէջ : Մինակ ասպէսին խօսքերը լսուեցան, եւ կոմսն ու Կրանդշանի մեծարգոյ վանահայրն ի մահ դատապարտեցան :

Երկու բանտարկեալները դարձեալ տարուեցան իրենց գետնի տակ խաւարային բանտը,

ուր կը սպասէին իրենց վնոռոյն գործադրութեանը, որ հետեւեալ օրն ի գործ պիտի դրուէր:

Ասպէսն իւր ծառայութիւններուն վարձք գործնի որ կը ջանար ցուցունել թէ հասարակապետութեան բրած է, խնդրեց որ կոմսին ամբողջ իրեն տուի. խոստացան սալ, եւ իշխանութիւն առաւ գալ բնակիլ ամբողջ:

Ասպէսն իբրեւ փառաւոր յաղթանակող մը ժողովեց քանի յափճակութեան ծարաւի թշուառներ, եւ բերաւ զանոնք Վօսրէեանին ամբողջ: Անոնց մօտեցալը տեսնելով կոմսուհին եւ իւր աղջիկը ժողովեցին իրենց ծանրագին ազնիւ գոհարները, եւ փութացին փախչիլ. գացին պատկարեցան ծերունի որսորդապետ Յովսէփին տունը, որ անտառին մէջ խարխուլ խրնիթի մը տակ կը բնակէր իւր կրնոջը հետ ի միասին:

Իբրեւ յաղթանակող մը մտաւ ասպէսն ամբողջին մէջ, եւ առատաձեռնօրէն վարձատրեց մարդիկը, որոնք որ այս դիւրին աշխարհակալութեան մէջ իրեն օգնեւ էին: Հաստատեցաւ հոն, եւ իւր խորհուրդներուն յաջող ելքը

հոչակեց իրեն կուսակիցներուն զագրալի կերուխում մը սալով :

Վօրէեանին կինն ու աղջիկն իրենց ժամանակը լալով ու աղօթելով կանցունէին, խնորելով յԱսուծոյ որ հանի իրենց օգնութեան հասնելու, եւ փրկէ կոմսը գլխասութեան մօտալուս վսանգէն : Իրենց այս ծանրաբախիժ սրտուքեանն ասէն յանկարծ ի վերցասկեց Լուիզ աղաղակելով, մայրս, իմ հայրս պիտի ազատի : Ահա ես կերբամ էքինալ, եւ թէ որ Ասուած իմ խորհուրդս յաջողէ, իրիկուն չեղած կը գտնես զինքն բռնութեամբ մէջ :

Կեհդանի եռանդով մը հարցուց իրեն կոմսունին, սիրելի զաւակս, ինչ չպէս կը յուսասս այս բանին յաջողուիլը :

Ես գիտեմ ընելիքս, մայրս, Ասուած ինձի տուն կուսայ թէ, կարող պիտի ըլլամ հայրս ազատելու, եւ ի հարկէ Ան որ կը հսկէ անմեղաց պաշտպանութեանը վրայ, ձեռնու պիտի ըլլայ ինձ այս բարեպաշտական ջանքին մէջ :

Յովսէփ, ըսաւ ծերունի որսորդապետին,

յաւանդ տուր ինծի՝ քու որդւոյդ վերահուճ  
ու լայնաւերջանակ փեղոյրը, վասնզի պէ՛տ  
է որ ծայտալ կերպարանով երթամ էքի՛նալ  
որ ամենեւին մէկը չկարողանայ զիս նանա-  
չել, եւ այս ծայտալ կերպարանով ազատ պի-  
տի մնամ ամէն թշնամիներէ:

Պէ՛տ չգացած պլլուեցաւ կոմսուհիին ծուճ-  
կերուն եւ խնդրեց անկէ իւր օրհնութիւնը .  
աղաղակեց, մայրս, օրհնէ՛ քու զաւակդ . եւ  
թէ որ ես իւր փորձութեանը մէջ իյնամ, ըսել  
է որ Աստուած այնպէս կամեցեր է, իւր սուրբ  
կամքը կատարուի:

Կոմսուհին աղի արցունքներ քափելով գր-  
կեց Լուիզը, եւ համբուրեց զանի: Պնաց  
ծաղկահասակ աղջիկը առանց իմաց տալու  
թէ՛ ինչպէս կը յուսար կոմսն ազատել: Վո՛ս-  
րէեան տիկինը բոլոր օրը Քրիստոսի պատկե-  
րին առջին ծունկի վրայ եկած կը խնդրէր  
Տէրոջմէ՛ որ օգնէ իւր խորհրդոյն մէջ:

Պիտերը եկաւ հասաւ, եւ դէռ Լուիզը չե-  
րեւցաւ: Կոմսուհին անհնարին անձկու-  
թեամբ կը հառաչէր, եւ ամէն մէկ վայրկեար:

նին կր խրկէր Յովսէփը որ երթայ դիտէ նամբուն վրայ անոր եկաւորութիւնը: Որսորդապետին բնական անհառին կէս գիշերուան ժամը զարկաւ, եւ դեռ մէկն երեւան չելաւ: Վերջապէս պատահանին փեղկին քանի մը քերեւակ զարկուածներ լսուեցան: Ծեր Յովսէփը կոմսուհիին հետ մէկտեղ դուրս ելաւ, եւ նոյն վայրկեանին կոմսուհիին իւր այրը քերուան մէջ գտաւ. վօսրէեան տիկինն ողջունեց զինքն գորովալիւ սիրով, եւ հարցուց իրեն քէ ուր է իւր աղջիկը:

Կոմսը լուռ կեցաւ եւ սկսաւ աղբիւրի պէս արտասուիլ քափել աչքէն:

Հարցուց իրեն դարձեալ կոմսուհին, Աստուծոյ սիրուն ըլլայ ըսէ ինձի ինչ եղաւ:

Ո՞վ իմ վեհանձն գաւախս, երանի քէ կարեւորապէս չգողջալ քու դիւցազնական անձնանութութեանդ վրայ, Տէրը յաջողէ քու խորհուրդդ: Մտիկ ըրէ, սիրելի եղիսաբեթս. այս իրիկուն բանապետն եկաւ ինձի իմաց տուաւ քէ անձանօր մէկը հասարակապետական ժողովոյն ախ սգ ս հէն հրաման ունենալով կուզէ քե-

զի հետ ծածկաբար տեսութիւն ընել : Տեսայ  
սեւորակ վերարկու հագած մէկու մը ներս  
մտնելը , որուն փեղոյրին լայն շրջանակը ե-  
րեսը կը գոցեր : Երբ մինակ մնացիմք , օտա-  
րականը գիրկս նետուեցաւ , եւ նանչցայ աղ-  
ջիկս :

Հայրս , ըսաւ ինծի , ժամանակ մի կոր-  
սրնցունէր , ազատիլը նայէ . ես բանտապետը  
ձեռք առած եմ , պիտի բողոք տեգի դուրս ել-  
լէ : Գնա միաբանէ՛ իմ մօրս հետ՝ որ այս  
վայրկենիս կը զտնուի ձերունի Յովսէփին  
տնակը : Եւ իմ բռնուելէս ի վեր ինչ որ եղած  
գացած էր ամբողջին մէջ , պատմեց ինծի : Երբ  
պատմութիւնը լմնցուց , ըսի իրեն , ես պատ-  
րաստ եմ երթալու որ դու ետեւէս գաս : Բայց  
այս վեհանձն զաւակն իւր հագած երկայն  
վերարկուն ինծի հագցուց եւ գլխուն փեղոյ-  
րը որ երեսը կը ծածկէր , իմ գլուխս դրաւ ,  
եւ ըսաւ ինծի , բու ազատութիւնդ ես բու տեղդ  
կենալու պայմանաւ ձեռք բերած եմ : Ինչ  
որ կրցայ ըրի որ իւր միտքը փոխեմ . բայց  
ամենեւին մտիկ չըրաւ , եւ հարկադրեցայ իւր

կամփին գիշանելու: Արդ որովհետեւ հիմա միաբանած եմք, պէ՛տք է որ փախչելով ժամ մը յառաջ Հելլէսիա հասնելու ջանանք: Ամիս մը կենանք Ֆրիպուրկի մէջ, Ասուած ինք փրկէ մեր սիրելի Լուիզը մահուանէ, ան սեղ կը բողոսմ քեզ երբայ գտնել զինքը:

Երբ այս վերջին խօսքերը լսեց կոմսուհին, մարեցաւ, եւ սասկամորմոք ցաւը զինքը բոլորովին անզգայ քրած էր: Այրն ըսաւ իրեն, ժամանակը մեզի համար շատ կարեւոր է, պէ՛տք է որ առանց վայրկեան մը անցունելու նամբայ ելլանք: Երեք օր լեռներուն մէջ սեղէն ֆալելով հասան Ռէն գետին հով, եւ անմիջապէս զացին Ֆրիպուրկ ֆաղաքը, ուր անհնարին անձկութեամբ նոր լուրերու կը սպասէին եբինալէն:

Կոմսին փախստեանը հետեւեալ օրը ժողովուրդը ժողվուած այն սեղ ուր որ մահապարտներուն տախտակամածը կանգներ էին, անհամբերութեամբ կը սպասէին մահապարտներուն երեւալուն: Հասան վերջապէս. Կրանդշանի վանահայրն առջեւէն կերթար,

Եւ անոր ետեւէն Լուիզ մեռելաշիպ դէմքով ,  
բայց արիութեամբ : Էբինալի շրջագայ գեղա-  
ցիները որոնց ամէնքն ալ Վօսրէեան ընտանի-  
քին բարերարութիւնները վայելած էին , չկր-  
ցան իրենց զայրալից սրտունջը բռնել՝ անոր  
դէպ ի մահապարտներուն տախտակամածին  
ուղղիլը տեսնելով : Ելաւ հոն մատաղահասակ  
աղջիկը , եւ խնդրեց որ թոյլ տրուի իրեն հա-  
ւաքած ժողովրդեան քանի մը խօսք խօսելու :  
Այս շնորհն իրեն պարգեւեցաւ՝ բնակիչնե-  
րունո՛սք ելլելէն վախճալով :

Երեսը ժողովրդեան դարձնելով ըսաւ մեղ-  
մօրէն , բնակիչներ , ես ամենավառ մասնու-  
թեան գոն կըլլամ , բայց գոն կը մեռնիմ ,  
վասն զի իմ կենացս պատճառը կարող եղայ  
ազատելու : Գու՛մ ամէնքդ որ ունկնդիր կըլլաք  
ինձ , կը հանչնաք Վօսրէեան ընտանիքը : Ձեր  
մէջէն ոմանք որոնց դէմքն ինձի ծանօթ են ,  
գիտեն մեր ընտանիքին բարեգործութիւնները .  
արդ կը խնդրեմ աղաչանօք որ թող չտաք ան-  
պատիժ վայելել անոր , որ մեր կորստեանը  
պատճառ եղաւ : Նորասունեան տասնէն որ



այսօր կը բնակի իմ նախնեացս ամրոցը , իւր կենացը փրկութիւնն իմ հօրս հիւրասիրութեանը պարտաւորելէն յետոյ՝ միտքը դրաւ որ ինծի հետ պսակի , իմ ընտանեացս ինչքերուն տէր ըլլալու համար : Հայրս իմ բռնառութեանս ընկերակից մեծարգոյ վանահայրին խրատովն անոր խնդիրը մերժեց . ասոր վրայ զայրանալով՝ մեր ընտանեացը կորստեանը վրայ երդում ըրաւ , ու գնաց խաբէութեամբ ամբաստանելով հօրմէս մահուան դատապարտել տուաւ զինքը . որովհետեւ ես էի իւր աղէտիցը պատճառ , չուզեցի որ ինծի համար կորուստ ըլլայ . եւ խաբելով վերակացու բանտապետը՝ իւր տեղը բռնեցի : Մնաքառով բնակիչներ : Աղաչեցէք հոգւոյս հանգրստեանը համար . ես երջանիկ կը մեռնիմ , վասն զի ազատեցի իմ հայրս :

Ծաղկահասակ աղջկանը խօսքերը ի գորով շարժեցին բազմութիւնը : Եւ այն վայրկենին ուր որ դահիճը կը պատրաստուէր զինքը մահաբեր սախսակին կապելու , ժողովուրդը մագլցի աստիճաններէն վեր ելլելով յա-

փրճակեցին Լուիզն ու վանահայրը : Վարձաւոր գործաւորներու փոքրիկ բազմութեան մը ազնուականաց մահը խնդրելուն շնայելով՝ յաղթանակաւ տարին զիրենք մինչեւ քաղաքին դուռը . ծաղկահասակ Լուիզը դուրս ելաւ էքինալեն, եւ կառք մը որ կը սպասէր իրեն, կայծակի նման տարաւ զինքը : Այս դիպուածէն ետք օր ետքը հասաւ Ֆրիպուրկ քաղաքը :

Նորասունեան ասպետը շվայելեց ընդ երկար իւր անիրաւութեամբ ձեռք բերած բարութիւնները : Կոմսին հպատակները բազմութեամբ ամրոց եկան, առին զայն ձեռքէն, եւ զինքն իւր երկու անառակ ընկերներովը մէկ տեղ կախեցին շարժական կամուրջին վանդակէն : Գաւառին մեծամեծները ժողովուեցան, եւ ծախու հանելով ամրոցը՝ ստացան զայն իբրեւ ազգային ստացուած, որ ժամանակէ մը յետոյ թէ որ վերադառնայ իւր բնիկ տէրը դարձեալ անոր յանձնեն :

Վօտէեան ընտանիքին վեհանձնական բարեգործութիւնները չկորսուեցան : Երբ Նա-

բովեան յարող նստաւ, Վօսրէեան կոմսը վերադարձաւ Գաղղիա . եւ չէր թէ մինակ նորընտիր կայսեր շնորհիւն իւր ինչքերը ստանալու բերկրութիւնն ունեցաւ, այլ նաեւ իւր կոմսութեան բարի բնակիչներուն իւր վերադարձը տօնախմբութեան օր մը եղաւ : Լուիզ վերադարձին աւելի եւս գեղեցկացեր էր, քիչ մը ժամանակէն յետոյ մօտաւոր տեղերէն ազնիւ քննանքի մը տղուն հետ ամուսնացաւ . որ իւր բարեսուքեամբն ու ազնիւ զգացմունքներովն իրեն արժանաւոր փեսայ մը եղաւ : Կլարանդեանի վանահայրը այս երկու ծաղկահասակ անձիւններուն պսակը օրհնեց, եւ քիչ մը ատենէն վախճանեցաւ՝ իւր հետք գերեզման տանելով բարեկամաց վիշտերը : Պ. Վօսրէեան միշտ անձնապահ եղաւ հնարքներէ՝ որ կը յուզէին մայրաքաղաքին մէջ . եւ իւր կենաց մնացորդն իւր մարդիկներուն բարօրութեանն ու երջանկութեանը նուիրեց :



24568 (8 pages)

« Ազգային գրադարան



NL0109612

« Ազգային գրադարան



NL0109611

« Ազգային գրադարան



NL0109610

7-90

« Ազգային գրադարան



NL0109609

